ՀԱՅԿՈՈՊ

ԿՈՒԼՏ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ
ՍԵՐԻԱ № 3

26.124
134

# ԾՐԱԳԻՐ
# ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՈՊ-ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ



334.5(07)
ծ-98

ՊԵՏՀՐԱՏ
1931

14.05.2013
05 JAN 2010
334.5(08)
Ծ-98

# ԾՐԱԳԻՐ

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՈՊ-ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Յերևան 1931

14744-57

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 1505
ՀՐԱՏԱՐԱԿ. 1562
ԳՐԱՌԵՊՎԱՐ 6268 (Բ)
ՏԻՐԱԺ 3000

# ԾՐԱԳԻՐ

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՈՊԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### 7-ՐԴ ԲԱԺԻՆ

### Թեմա I

*Սպառողական կոոպերացիայի կուլտուրական աշխատանքները՝ գյուղական տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման խնդիրները կատարելու բնագավառում (2 ժամ)։*

Պարապմունքների խնդիրն է լինելու պարզել, որ

1. Գյուղական տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման, կոլլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների շինարարության և համատարած կոլլեկտիվացման բազայի վրա կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու կապակցությամբ՝ կուլտուրական հեղափոխության առաջ ծառացել է վողջ կուլտուրական աշխատանքների ձևերի ու բովանդակության արմատական վերակառուցման պատասխանատու խնդիրը։

2. Գյուղական տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման խնդիրներին համընթաց՝ կուլտուրական հեղափոխության համար մղվող պայքարը պետք հանդիսանա նաև հնգամյակի չորրորդ՝ վճռական տարվա հսկայական ծրագրի—արդֆինպլանների և կոլ-

լեկտիվ ու խորհրդային տնտեսությունների ծրագրերի կատարման պայքարը։

3. Գյուղատնտեսության զարգացումը, հիմնական հացահատիկային շրջանների կեսից վոչ պակասի նորագույն տեխնիկայի հիմունքներով սոցիալիստական-կոլեկտիվ տնտեսության ճանապարհին անցնելը, առաջադրում են ժողովրդական լուսավորության սիստեմի վերակառուցման և դպրոցները պոլիտեխնիզացիայի յենթարկելու հիմունքներով, գյուղի համար նոր կադրեր պատրաստելու խնդիրը։ Կադրերի ստեղծման հարցը հանդիսանում է սոցիալիզմի կառուցման հիմնական խնդիրներից մեկը։

4. Գյուղացիական — հատկապես կոլտնտեսական ու խորհտնտեսական մասսաների ակտիվության բուռն աճումը, առաջադրում է մասսաների կուլտուրական սպասարկման գործնական աշխատանքներին անցնելը-ուժեղացնելով մասսաների դասակարգային դաստիարակությունը, մոտեցնելով այդ աշխատանքների կառուցումը մասսաների քաղաքական պահանջներին։

5. Սոցիալիստական շինարարության տեմպերի ուժեղացման և կենցաղը սոցիալիստական հիմունքներով արմատական վերակառուցման յենթարկելու համար՝ անհրաժեշտ է բարձրացնել գյուղի ու քաղաքի բնակչության կուլտուրական մակարդակը։ Հնգամյակի յերրորդ տարին պիտի հանդիսանա ընդհանուր գրագիտության համար մղվող պայքարի վճռական տարին։

6. Կուլտուրական հեղափոխության հսկայական խնդիրները կարող են լուծվել բազմամիլիոն մասսաները մոբիլիզացիայի յենթարկելու միջոցով միայն, կիրառելով սոցիալիստական մրցության, հարվածայնության,



կուլտ բրիգադների, կուլտ-էստաֆետների և հանդիսական կուլտ-պլանների մեթոդները։ Ծավալելով հետագա աշխատանքները լայնությամբ ու խորությամբ, պիտի հասարակական բուքսիրի վերցնել կուլտուրական աշխատանքներում հետ մնացող շրջաններն ու կետերը։

7. Պիտի միացնել նաև բոլոր խորհրդային, կուսակցական ու հասարակական կազմակերպությունների ուժերն ու միջոցները՝ կուլտուրական աշխատանքների խիստ ու միասնական պլանների հիմունքներով։ Անհրաժեշտ է պլանավորման յենթարկել լուսավորութ. ֆրոնտում աշխատող բոլոր կազմակերպությունների աշխատանքները, վորպեսզի հնարավոր լինի խուսափել նեղցեխային գերատեսչությունների սահմանափակումներից, վորոնք վնասում են կուլտուրական հեղափոխության գործին։

8. Սպառողական կոոպերացիան, վորպես հասարակական կազմակերպություն, վորն ունի կուլտուր-լուսավորության և կենցաղային օբյեկտների խոշոր ցանց, կուլտուրական աշխատանքներ կատարող ապարատ և ծախսում է հսկայական միջոցներ՝ սպասարկելով բազմամիլիոն աշխատավորական բանակին — պիտի հանդիսանա կուլտուրական հեղափոխության գործի ուժեղ գործոններից մեկը։

9. Սպառողական կոոպերացիայի մասսայական կուլտուր-լուսավորության աշխատանքները պիտի հանդիսանան մասսաները սոցիալիստական շինարարության հսկայական ծրագրի կատարման շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու միջոցներից մեկը, լուծելով սպառողական կոոպերացիայի առաջ դրված հիմնական խնդիրները՝ կապված կուսակցության 16 և կոոպերատիվ 2-րդ համագումարների վորոշումների, ինչպես նաև Համ.

Կ. (բ) Կ. կենտկոմի 1930 թվի սեպտեմբերի 3-ի դիմումի հետ:

10. Մասսաների աճող քաղաքական պահանջները առաջադրում են մեր յերկրի քաղաքական-տնտեսական կյանքի բոլոր խնդիրները ժամանակին մասսաների մեջ տեղափոխելու խնդիրը՝ լավացնելով սիստեմատիկ ու խորացրած պրոպագանդայի դրվածքը:

11. Միայն կոոպերատիվ աշխատանքների հանգուցային հարցերի շուրջը լայն պրոպագանդա ծավալելու և կոոպերատիվ ուսուցման լայն մասսայական դրվածքի հիման վրա յեն հնարավոր մասսաների գործնական մասնակցությունը կենսագործել կոոպերատիվ աշխատանքներում:

12. Անհրաժեշտ ե կուլտուրական աշխատանքների բոլոր հարցերին տալ մարքսիստական-լենինյան բովանդակություն. բացատրել ոպորտյունիստական յերեվույթների և «ձախ» խոտորումների դեմ պայքարելու անհրաժեշտությունը և պայքարել կոոպերացիայում գոյություն ունեցող նեպմանական վոգու դեմ: Անհրաժեշտ ե կոնկրետ աշխատանք կատարել սոցիալիստական շինարարության համար, այդ աշխատանքներում և հատկապես կուլտուրական շինարարության ֆրոնտում վերցնել հարվածային տեմպեր, թույլ չտալով, վոր կուլտուրական շինարարությունը հետ մնա սոցիալիստական շինարարության ընդհանուր տեմպերից:

13. Սպառողական կոոպերացիայի արմատական վերակառուցման և յերեսով դեպի կոլլեկտիվ ու խորհրդային (վորպես գյուղատնտեսությունը վերակառուցման յենթարկող գործոնների) տնտեսությունները դառնալու շուրջ պրոպագանդա մղելը՝ պետք ե լինի կուլտուրական աշխատանքների ուշադրության կենտրոնում:



14. Անհրաժեշտ ե միայնակ տնտեսությունների շրջանում բացատրական աշխատանք կատարել կոլլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների մասին, «վորոնց մասսայական փորձը կհամոզի միայնակներին կարճ ժամանակում կոլլեկտիվացման ուղին մտնելու անհրաժեշտությունը» (Համ.Կ.(բ) Կ. 16-րդ համագումարը):

15. Ուժեղացնելով կուլտուրական աշխատանքները բատրակների ու չքավորների մեջ, առաջիկայում ևս լուրջ ուշադրություն պիտի դարձնել բանվոր դասակարգի դաշինքը չքավոր ու միջակ գյուղացիության հետ ամրացնելու կողմը, վորպես սոցիալիստական շինարարության գործի անհրաժեշտ նախապայման:

Առաջիկայում ևս պիտի շարունակել պայքարը կուլակի դեմ, մերկացնելով նրա ակտիվ գործունեյությունը, վորոնք ուղղված են մեր շինարարության դժվարություններն ոգտագործելու կողմը, վորպեսզի կարողանան տանել իրենց համար անհրաժեշտ ագիտացիան և կատաղի պայքար մղեն կոլլեկտիվացման դեմ:

16. Անհրաժեշտ ե մերկացնել հակահեղափոխական վնասարարական խմբակների աշխատանքները, վորոնք տեղ գրավելով մեր տնտեսության բոլոր բնագավառներում՝ նպատակ են դրել ձախողել ինդուստրացման ու կոլլեկտիվացման աշխատանքները, վերականգնել կապիտալիստական կարգերը-հենվելով իրենց աշխատանքների ընթացքում աջ ոպորտյունիստական տարրերի վրա և փորձելով յենթարկել իրենց ազդեցությանը մեր տնտեսական ու պետական ապարատների կարեվոր մասերն ու պլանավորման մարմինները:

17. Սպառողական կոոպերացիան արտադրական ռելսերի վրա դնելու անհրաժեշտության և սեփական

արդյունաբերության զարգացման հարցերը պետք է արտացոլեն կուլտուրական աշխատանքներում, որպես արտադրական և առևտրա—ֆինանսական պլանների կատարման համար մղվող պայքարի հարցեր:

18. Սպառողական կոոպերացիայի մթերման աշխատանքների ծավալումը պետք է գնա գյուղացիական տնտեսությունների ապրանքայնացման շուրջ լայն բացատրական աշխատանքներ կատարելուն համընթաց, բացատրելով դրա շահավետությունը թե իրեն՝ գյուղացու և թե պետության համար, ցույց տալով նաև ապրանքայնության բարձրացման միջոցները:

19. Բացատրել ժողովրդական սննդի և հացի պատրաստման գործը արագությամբ ծավալելու խնդիրները որպես կենցաղը սոցիալիստական հիմունքներով վերակառուցման յենթարկելու անհրաժեշտ պայմաններ՝ կապված գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հետ:

20. Անհրաժեշտ է լայն բացատրական աշխատանք ազգաբնակության միջոցներն ու ներքին ռեսուրսները մոբիլիզացիայի յենթարկելու նշանակության մասին, որպիսի նպատակն է լինելու ազատել պետական միջոցները սպառողական կոոպերացիայի շրջանառությունից և տրամադրել յերկրի ինդուստրացման գործին:

21. Կուլտ—աշխատանքը պետք է օգտագործի ինքնաքննադատության զարգացումը, որպես ակտիվ մասսաներին շինարարության մեջ ներգրավելու մեթոդ՝ աշխատանքների թերությունները վերացնելու և նրանց ուղղման համար միջոցներ առաջարկելու միջոցով:

22. Սպառողական կոոպերացիան պետք է ակտիվ մասնակցություն ցույց տա յերկրի պաշտպանության գործին՝ կոոպերատիվ Ավիախիմի միջոցով միջազգային



կոոպերատիվ շարժման հետ կապ պաշտպանելու, Կարմիր բանակի ու Նավատորմի սպասարկման աշխատանքները ուժեղացնելու, համապատասխան խմբակների միջոցով ռազմական գիտելիքները մասսաների մեջ տարածելու և կուլտուրական աշխատանքների մյուս ձևերը զարգացնելու միջոցով:

| Վերամշակման ծրագիր | Աշխատանքի նյութ |
| --- | --- |
| 1. Կուլտուրական հեղափոխության խնդիրները՝ կապված գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հետ: | Ստալին և Կագանովիչ—Կենտկոմի զեկուցումը՝ Համկ (բ)Կ 16-րդ համագումարին: |
| 2. Մասսաների մոբիլիզացիան, Կուլտուրական հեղափոխության գործի համար՝ սոցիալիստական մրցության և հարվածայնության մեթոդներով: | Յա. Ա. Յակովլև— Կոլխոզշինարարությունը և գյուղատնտեսության բարձրացումը: |
| 3. Միասնական պլանի հիման վրա՝ միասնական ֆրոնտով դիմել պայքարի— հանուն մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման: | Կրուպսկայա— Միասնական պլան և կուլտ-աշխատանքների մեթոդները: |
| 4. Սպառողական կոոպերացիայի կուլտուր-լուսավորության աշխատանքները, որպես աշխատավորներին սպառողական կոոպերացիայի, արդ-ֆինպլանների, տնտեսական ծրագրի և առֆինպլանների կատարման համար գիտակցված պայքար մղելու գործում ներգրավելու միջոց: | Սպառողական կոոպերացիայի 2-րդ համագումարի բանաձևերը: |
| 5. Յերկրի տնտեսական-քաղաքական կյանքի հանգուցային հարցերի փոխադրումը մասսաների մեջ, որպես աշխատանքների | Ժողովրդական լուսավորության խնդրի շուրջը հրավիրված համամիութենական 2-րդ խորհրդակցության բանաձևերը: |

կատարման և ճիշտ դասակարգային գծի կիրառման անհրաժեշտ միջոց։

6. Սպառողական կոոպերացիայի խնդիրները, գյուղի սոցիալիստական սեկտորի կուլտուրական սպասարկման գործում։

7. Սպառողական կոոպերացիայի հանգուցային հարցերի շուրջը պրոպագանդա մղելու խնդիրը։

8. Սպառողական կոոպերացիան և երկրի պաշտպանությունը։

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ նշանակություն ունի կուլտուրական հեղափոխությունը մեր երկրի սոցիալիստական շինարարության արագացման գործում։

2. Ի՞նչ ասաց կուսակցության 16-րդ համագումարը կուլտուրական հեղափոխության մասին։

3. Որո՞նք են կուլտուրական հեղափոխության նոր խնդիրները, կապված գյուղական տնտեսության վերակառուցման հետ։

4. Ինչո՞ւ պետք է պայքարել կուլտուրական աշխատանքների ապաքաղաքականության դեմ։

5. Ի՞նչպիսի դեր ունի կատարելիք սպառողական կոոպերացիան կուլտուրական հեղափոխության ֆրոնտում։

6. Ի՞նչպիսի հիմնական նպատակներ պետք է հետապնդել կուլտուրական աշխատանքներ կատարելու ընթացքում։

7. Ի՞նչ է նշանակում կուլտուրական աշխատանքները մոտեցնել մասսաների քաղաքական պահանջներին։



8. Ինչո՞ւ համար է անհրաժեշտ կուլտուրական աշխատանքների բոլոր հարցերում մտցնել մարքսիստական-լենինյան բովանդակություն։

9. Ի՞նչ խնդիրներ ունեն սպառողական կոոպերացիայի կուլտուրական աշխատանքները գյուղի սոցիալիստական սեկտորի սպասարկման գործում։

10. Ինչո՞ւ համար է անհրաժեշտ, կուլտուրական աշխատանքներ կատարելու ժամանակ գլխավոր ուշադրությունը դարձնել խորհրդային տնտեսությունների սպասարկման վրա։

11. Ի՞նչպիսի նպատակ ենք հետապնդելու մենք անհատական տնտեսությունների կուլտուրական սպասարկման ժամանակ։

12. Ի՞նչպես է հարկավոր արտացոլել կուլտաշխատանքներում՝ սպառողական կոոպերացիան արտադրական ռելսերի վրա դնելու անհրաժեշտությունը։

13. Ինչո՞ւ համար է անհրաժեշտ կուլտաշխատանքներում դնել գյուղական տնտեսությունների ապրանքայնության լայնացման խնդիրները։

14. Ինչո՞ւ համար է անհրաժեշտ ազգաբնակության միջոցների և ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի շուրջը լայն բացատրական աշխատանք կատարելը։

15. Ի՞նչպիսի նպատակ ենք հետապնդում մենք ժողովրդական սննդի գործի մասին մղելիք պրոպագանդայով։

16. Ի՞նչու համար է անհրաժեշտ ինքնաքննադատության նշանակության պարզաբանումը մեր սոցիալիստական շինարարության գործում։

Գործնական առաջադրություններ են հանդիսանալու՝ հայտնաբերելու, թե ինչպես է սպասարկվում գյուղի սոցիալիստական սեկտորը կուլտուրական աշխատանքներով՝ սպառողական կոոպերացիայի կողմից. ինչպիսի հանգուցային հարցերի շուրջն է տանում կոոպերատիվն իր կուլտուրական աշխատանքները. աշխատանքների հասարակական ձևերի փոփոխման աստիճանը — սոցիալիստական մրցություն, հարվածայնություն, կուլտուրական արշավ և այլն: Ցույց տալ աշխատանքների թերությունները և մատնանշել նրանց վերացման միջոցները:

## Թեմա II.

### Սպառողական կոոպերացիայի կուլտուրական աշխատանքների կազմակերպական հարցերը:

Պարապմունքների խնդիրն է լինելու պարզաբանել, վոր

1. Սիստեմատիկ աշխատանքներ կատարելու ժամանակ կուլտուրական աշխատանքների պլանավորումը հանդիսանում է կարեվորագույն պայմանը: Կոոպերատիվ կազմակերպության աշխատանքների ծրագիրը պիտի մտնի տեղի միասնական ծրագրի մեջ և տեղական ժողովրդական լուսավորության բաժնի մեթոդական և կուսակցական կազմակերպությունների քաղաքական ղեկավարությամբ կենսագործվի կոոպերատիվի կազմակերպության կողմից ինքնուրույնաբար:

2. Կուլտուրական աշխատանքների պլանավորման հիմնական ցուցանիշներ են հանդիսանալու՝ ա) շրջանի տնտեսության հաշվառումը, բ) գյուղի սոցիալիստական սեկտորի մեջ մտած տնտեսությունների թիվը, գ) բը-



նակչության սոցիալական կազմը, հատկապես չքա-
վորների և բատրակների թիվը, գ) բնակչության թիվը
ըստ սեռի և հասակի (հասակավորներ, յերիտասարդ-
ներ, յերեխաներ) և նրանց կոոպերացումը, ե) անցյալ
աշխատանքների արդյունքների հաշվառումը, զ) բնակ-
չության կուլտուրական մակարդակը, է) ազգային ու
կենցաղային առանձնահատկությունները, ը) ինչպի-
սի ուժեր կան կուլտուրական աշխատանքներ կատա-
րելու համար:

3. Կուլտուրական աշխատանքների համար հատ-
կացված գումարները պիտի ծախսվեն կոոպերատիվ
կազմակերպության հաստատուն նախահաշվի համա-
ձայն և նրա անմիջական հսկողությամբ, համաձայնե-
ցնելով այդպիսին վերադաս կոոպերատիվ կազմակեր-
պությունների հրատարակած՝ սպառողական կոոպերա-
ցիայի կուլտուրական աշխատանքների միջոցները կազ-
մելու և ծախսելու մասին վորոշումներին:

4. Անհրաժեշտ է մասսաների ինքնագործունեյու-
թյունը կուլտուրական աշխատանքներում ներգրավելու
հիման վրա ներգրավել հենց իրենց մասսաների մի-
ջոցները«կուլտուր-քաղաքական աշխատանքների հա-
կացվող միջոցները, պիտի հանդիսանան հենց իր՝ հա-
սարակության միջոցները այդ աշխատանքներում ներ-
գրավելու խթանման միջոցները — նրանց ինքնագոր-
ծունեյության հիման վրա» (Սպառողական կոոպերա-
ցիայի 2-րդ համագումարի բանաձևից):

5. Ժողովրդական լուսավորության բաժիններին
կից կազմակերպված կուլտուրական շինարարության
խորհուրդները հանդիսանում են հասարակա-
կան կազմակերպություններ, վորոնք միացնում են տե-

ղերում զանազան կազմակերպությունների կողմից կատարվող կուլտուր-լուսավորության աշխատանքները: Խորհրդի կազմի մեջ մտնում են բոլոր այն կազմակերպությունների ներկայացուցիչները, վորոնք կատարում են քաղլուսավորական աշխատանքներ:

6. Կուլտուրական աշխատանքների հաստատուն ղեկավարությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է ամրացնել կոոպերացիայի կուլտուրական ապարատների ամրացումը: Շրջանային սպառողական ընկերության կուլտուրական աշխատանքների ղեկավարությունը կենսագործվում է վարչությունների հատուկ հրահանգիչների և կոնսուլտանտների միջոցով, վորպիսիներն են՝ մասսայական քաղաքական լուսավորության, կադրերի պատրաստման ու վերապատրաստման, կենցաղային, կինո-ռադիո հրահանգիչներ ու կոնսուլտանտներ:

7. Գյուղի կուլտուրական աշխատանքների օջախներ են հանդիսանում խրճիթ-ընթերցարանները, գյուղական ակումբները և կուլտուրական շինարարության տները: Սպառողական կոոպերացիայի կուլտուրական աշխատանքները պետք է կատարվեն այդ օջախների միջոցով:

8. Կուլտուրական աշխատանքների առաջ կանգնած խնդիրների լուծման համար անհրաժեշտ է կատարել տեղական աշխատանք կուլտուրական աշխատանքներ կատարող ակտիվ ստեղծելու ուղղությամբ: Կուլտուրական աշխատանքներ կատարող ակտիվի կազմակերպման հիմնական ձևերն են հանդիսանում՝ կոոպերատիվ բյուրոները, կուլտուր-կենցաղային հանձնաժողովները, կուլտուրական մարտիկները և այլն:



9. Անհրաժեշտ է կարգավորել կոոպերատիվ ակտիվի աշխատանքների դրվածքը, վորը պետք է հանդիսանա գյուղական կենցաղի սոցիալիստական վերակառուցման նախաձեռնողը, ակտիվորեն մասնակցելով կոոպերացիայի կողմից կատարվող կուլտուրական աշխատանքների բոլոր բնագավառներում:

10. Հրահանգչի աշխատանքների հիմնական խնդիրներն են հանդիսանում՝ կոոպերատիվների կողմից կատարվող կուլտուրական աշխատանքների հրահանգումն ու ղեկավարությունը, ղեկավարելով հատկապես՝ կոոպերատիվ բյուրոներին կից կուլտ-հանձնաժողովների և կուլտուրական մարտիկների աշխատանքները, ինչպես նաև ամեն կերպ զարգացնում են կուլտուրական աշխատանքների հասարակական մեթոդները, զարգացնելով նաև մասսաների նախաձեռնությունն ու ինքնագործունեությունը:

11. Կուլտուրական ամբողջ աշխատանքը պետք է կատարվի սոցիալիստական մրցության մասսայական ձևերի կիրառման և հարվածայնության մեթոդով, ծավալելով կուլտուրական արշավները, կուլտ-էստաֆետները, հասարակական բուքսիրի վերցնելով կուլտուրական աշխատանքներում հետ մնացող շրջանները:

12. Կուլտուրական աշխատանքներով վճռականորեն յերեսով դեպի կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների դառնալը պետք է կատարվի ամենից առաջ կուլտուրական աշխատանքների ծավալման ու վորակական լավացման միջոցով:

Կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների շուրջ մնայուն կուլտուր-լուսավորության, կուլտուր-կենցաղային հիմնարկների կազմակերպում, անգրագիտու-

թյան վերացման աշխատանքների կատարում, աշխատավորության—առաջին հերթին կոլտնտեսական ու խորհտնտեսական մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնող աշխատանքների կատարում և կադրերի պատրաստում—հատկապես խորհտնտեսությունների բանվորներից ու չքավոր միջակային կոլտնտեսական մասսաներից:

13. Խորհրդային տնտեսությունները հանդիսանում են գյուղի խոշոր սոցիալիստական տնտեսությունների օջախները—վերափոխելով գյուղական տնտեսությունը սոցիալիստական հիմունքներով, որոնք պիտի առանձնահատուկ ուշադրության առարկա դառնան կուլտուրական աշխատանքների կատարման ժամանակ:

14. Անհրաժեշտ ուշադրություն պիտի դարձնել դաշտային աշխատանքների ժամանակ կատարվելիք կուլտուրական աշխատանքների վրա: Պիտի լայն չափով կիրառել աշխատանքների շարժական ձևերը,—շարժական ընթերցարաններ, շրջիկ կինոներ ու ռադիոներ, գյուղերի կազմակերպում դաշտային աշխատանքների հանգստի ու ճաշի ժամերին, մուլրների ու հրապարակների կազմակերպում՝ գեղջկուհիների աշխատանքը հեշտացնելու նպատակով:

| Վերամշակման ծրագիր | Աշխատանքի նյութ |
| --- | --- |
| 1. Պլանավորման հարցերը կուլտուրական աշխատանքներում: | Սպառողական կոոպերացիայի 2-րդ համագումարի բանաձևերը: |
| 2. Կուլտուրական աշխատանքների ծախսերի նախահաշիվը կազմելու և ծախսելու կարգը: | Կրուպսկայա.— Միասնական պլան և կուլտուրական աշխատանքների նոր մեթոդները: Ժողլուս. աշխ. 1930 թ.: |
| 3. Կուլտուրական շինարարության խորհուրդների խնդիրները: | Քաղլուսաշխատանքը կոլեկտիվ ու խորհրդային տնտեսություններում: Ժողլուս. աշխ. 1930 թ.: |
| 4. Կոոպերատիվ ապարատների կուլտուրական աշխատանքների ղեկավարությունը: | |
| 5. Ակտիվ մասսաների գործունեության ներգրավումը, որպես կուլտուրական աշխատանքների կազմակերպման հիմնական մեթոդ: | |



## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ համար է անհրաժեշտ կուլտուրական աշխատանքների պլանավորումը:
2. Ի՞նչ բան է կուլտուրական աշխատանքների միասնական ծրագիրը:
3. Ի՞նչպես են կազմվում և ծախսվում կուլտուրական աշխատանքների միջոցները սպառողական կոոպերացիայի գծով:
4. Ի՞նչպիսի խնդիրներ ունեն կուլտուրական շինարարության խորհուրդները:
5. Ի՞նչպես է կենսագործվում կուլտուրական աշխատանքների ղեկավարությունը կոոպերացիայում:
6. Ի՞նչ է նշանակում կուլտուրական արշավ և ի՞նչպես է նա կազմակերպվում:
7. Ի՞նչպես է կազմակերպվում կուլտ-եստաֆետան:

ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվ.
14744-57

Գործնական առաջադրություններ են հանդիսանալու՝ վերանայել շրջանային սպառողական ընկերության կուլտուրական աշխատանքների նախահաշիվը և տալ յեզրակացություն նրա ճիշտ կամ սխալ կազմված լինելու վերաբերյալ: Բնորոշել, թե ինչպես է շրջանային սպառողական ընկերությունը իր կուլտուրական աշխատանքներով կապվում կուլտուրական շինարարության խորհրդի հետ: Հայտնաբերել սոցիալիստական մրցության ու հարվածայնության արդյունքները:

Այս աշխատանքը կատարել լավ աշակերտներից կազմված բրիգադայի միջոցով:

## Թեմա III.

*Կուլտուրական աշխատանքների խնդիրները՝ կոոպերատիվ հասարակայնության զարգացման գործում (2 ժամ):*

Պարապմունքների խնդիրներն են լինելու պարզաբանել, վոր

1. Հասարակական-մասսայական աշխատանքների ծավալումը կախված է իր՝ կոոպերատիվի աշխատանքների աշխուժացումից,—կոոպերատիվ բյուրո, կոոպերատիվ կազմակերպիչներ, շրջկոոպերատիվ բյուրո, խանութային, ճաշարանային և այլ հանձնաժողովներ, հասարակական հրահանգիչներ և վերահսկիչներ:

2. Կուլտուրական աշխատանքների խնդիրը պիտի լինի՝ ոգնել կոոպերատիվ ակտիվին կոոպերատիվ հարցերի ուսումնասիրության գործում, ակտիվի համար կարճատև կուրսեր, կոոպերատիվ գրագիտության դըպրոցներ, գրագիտական-առարկայական խմբակներ կազմակերպելու, կոոպերատիվ ուսուցման հեռակա կուրսե-



րում ներգրավելու, ակտիվի մշտական հրահանգչական խորհրդակցություններ հրավիրելու, նրանց՝ կոոպերատիվ ակտիվի կուլտուրական աշխատանքների կատարման գործում ներգրավելու և այդ աշխատանքների ղեկավարումը կազմակերպելու և կոոպերատիվ աշխատանքների խնդիրների շուրջը կոնսուլտացիա կազմակերպելու միջոցով, մտածելով միաժամանակ նոր կադրեր պատրաստելու մասին:

3. Հատուկ խնդիր է հանդիսանում՝ կնոջը կոոպերատիվ ակտիվում ներգրավելը, կոոպերատիվ դըպրոցների, խմբակների և աշխատանքների այլ տեսակների միջոցով նրանց կուլտուրական մակարդակը բարձրացնելու հիման վրա:

4. Հատուկ նշանակություն տալով կոոպերացիայի հաշվետվությունը մասսաների առաջը դնելու և այդ աշխատանքները նրանց վերահսկողությանը յենթարկելու խնդրին—կուլտուրական աշխատանքների հիմնական խնդիրն է լինելու՝ կազմակերպել մասսայական հաշվետվություններ մասսաների առաջ, կազմակերպել կոոպերատիվի և վարչության միացյալ-ընդլայնած նիստեր, վարչության նիստերը փոխադրել գյուղերում, կազմակերպել մշտական հաշվետու ժողովներ ըստ գյուղերի և ըստ խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունների:

5. Կուլտուրական աշխատանքների խնդիրն է հանդիսանում՝ պարբերական-մասսայական հաշվետու ժողովների սպասարկումը—սպառողական կոոպերացիայի աշխատանքներն ու նրանց հաջողություններն արտահայտող գեղարվեստական ցուցահանդեսներ կազմակերպելու, լոզունգներ և պլակատներ կախելու, գրավա-

ճառքի կիոսկներ կազմակերպելու, շրջիկ գրադարանների ներգրավման և հաշվետու ժողովների վերջում փոքրիկ գեղարվեստական ելույթներ կազմակերպելու միջոցով:

6. Մասսաների ուշադրությունը սպառողական կոոպերացիայի հանգուցային խնդիրների շուրջը գրավելու նպատակով՝ կուլտուրական աշխատանքների խնդիրների մեջ պիտի մտնեն զանազան թեմաների շուրջը զեկուցումներ կազմակերպելը, ինչպես օրինակ՝ «սպառողական կոոպերացիայի աշխատանքների, այդ թվում նաև մատակարարման դժվարությունների բնույթն ու պատճառները», «գյուղացիական տնտեսության ապրանքայնության և մթերումների զարգացումը», «գյուղի սպառումը, կապված հացամթերումների հետ», «ինչո՞ւ համար է անհրաժեշտ բնակչության միջոցների և ներքին ռեսուրսների մոբիլիզացիան և այլն:

7. Անհրաժեշտ է նախապես նախապատրաստվել հաշվետու և սպառողական կոոպերացիայի ընթացիկ աշխատանքների շուրջը զեկուցումներ կազմակերպելուն: Սպառողական կոոպերացիայի ընթացիկ աշխատանքների շուրջը զեկուցումներ կազմակերպելուց առաջ անհրաժեշտ է նախապես հանձնարարել մի քանի գրքերի և լրագրային թերթերի ընթերցումը. վաղորոք պիտի կախ տալ մի քանի այնպիսի հարցեր, որոնց շուրջն անդրադառնալու յե զեկուցողը՝ իր զեկուցման ընթացքում:

8. Կուլտուրական աշխատանքների ծավալման առանձնահատուկ նշանակությունը զգացվում է սպառողական կոոպերացիայի հաշվետու կամպանիայի ժամանակ, յերբ կատարվում է սպառողական կոոպերացիայի աշխատանքների լայն ու մասսայական ստուգում: Կոոպերատիվ ապարատը խորթ և անհարազատ տարրերից զտելու հարցերի շուրջը պրոպագանդա մըղելը—հատկապես հաշվետու վերընտրական կամպանիայի շրջանում՝ պետք է գնա լայն ինքնաքննադատության ծավալման ճանապարհով:



9. Կոոպերատիվ հասարակայնության զարգացման գործում հսկայական նշանակություն ունի կոոպերատիվ հարցերի լուսաբանումը, ինչպես տպագրված, նույնպես և պատի լրագրերի միջոցով: Կուլտուրական աշխատանքների խնդիրների մեջ են մտնում լրագրերի կազմակերպումն ու մասնակցությունը նրանց մեջ է տեղական հսկողության ու օգնության ցուցաբերում՝ տեղական պատի լրագրերում կոոպերատիվ անկյուններ կազմակերպելուն: Կուլտուրական աշխատանքների խնդիրների մեջ են մտնում նաև գյուղթղթակիցների խմբակներում սպառողական կոոպերացիայի աշխատանքների մասին զրույցներ կազմակերպելը, նպատակ ունենալով ծանոթացնելու գյուղթղթակիցներին սպառողական կոոպերացիայի հերթական ու հարվածային խնդիրների հետ, օգնելով միաժամանակ գյուղթղթակիցների նոր խմբակներ կազմակերպելու գործին:

10. Պիտի բացատրել մասսաներին՝ սպառողական կոոպերացիայի վրա հասարակակ. վերահսկողություն հաստատելու նշանակությունը, վորի հիմնական ձևն է հանդիսանում խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունների և մեքենա-տրակտորային կայանների շեֆությունը սպառողական կոոպերացիայի ձեռնարկությունների վրա, ամեն կերպ նպաստելով գործի զարգացմանը:

11. Սպառողական կոոպերացիայի աշխատանքները հետազոտող բրիգադաներ կազմակերպելիս կուլտուրական աշխատանքների խնդիրների մեջ է մտնում սպառողական կոոպերացիայի հարցերի ուսումնասիրության գործում նրանց օգնություն ցույց տալը:

12. Փայատերերի առաջարկությունների նշանակության լայն պարզաբանումը պիտի գնա այդ աշխատանքների օգտագործման զարգացման ուղղությամբ: Անհրաժեշտ է հետևել նույնպես, վորպեսզի կոոպերացիան ունենա փայատերերի առաջարկությունների գրանցման գրքեր, օգնելով նրանց՝ առաջարկությունների գրանցման գործում, յերբ փայատերը անգրագետ կամ կիսագրագետ է լինում:

13. Աշխատավոր մասսաներին կոոպերատիվ շինարարության հարցերի շուրջը մոբիլիզացիայի յենթարկելը կարող է կատարվել աշխատավորության կուլտուրական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ պայքարելու հիման վրա միայն, փոխելով աշխատանքների հասարակական ձևերը—սոցիալիստական մրցություն, հարվածայնություն և այլն:

14. Ամբողջ ճակատով ծավալուն սոցիալիստական հարձակման դիմելուց առաջ կուլտուրական ֆրոնտում հետամնացություն չպիտի լինի: «Գլխավորը, վորը չի բավականացնում մեզ—կուլտուրականությունն է ու կառավարելու շնորհքը: Տնտեսական և քաղաքական նեպը լրիվին ապահովում է մեզ կառուցելու սոցիալիստական տնտեսության հիմքերը: Գործը «միայն» պրոլետարիատի և նրա ավանգարդ կուլտուրական ուժերի մեջն է» (Լենին):



| Վերամշակման ծրագիր | Աշխատանքի նյութ |
|---|---|
| 1. Կոոպերատիվ աշխատանքների աշխուժացումը, վորպես հասարակական-մասսայական աշխատանքների ծավալման հիմնական պայման: | Սպառողական կոոպերացիայի 2-րդ համագումարի բանաձևը ընկ. Ագեյևի զեկուցման առթիվ (յերես 113-114) Ցենտրոսոյուզ, 1930 թ.: |
| 2. Կոոպերատիվ ակտիվում կատարելիք կուլտուրական աշխատանքների խնդիրները: | Կրուպսկայա—Միասնական ծրագիր և կուլտուրական աշխատանքների նոր մեթոդները: |
| 3. Կուլտուրական աշխատանքների խնդիրները սպառողական կոոպերացիայի հաշվետվությունը մասսաների առաջ դնելու ժամանակ: | |
| 4. Կուլտուրական աշխատանքը՝ ինքնաքննադատության ծավալման, հասարակական վերահսկողության հաստատման և փայատերերի առաջարկություններն օգտագործելու խնդրում: | |
| 5. Աշխատավորության կուլտուրական մակարդակի բարձրացումը, վորպես կոոպերատիվ շինարարության զարգացման ու ամրացման անհրաժեշտ պայման: | |

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ համար է անհրաժեշտ կոոպերատիվ ակտիվի աշխատանքների աշխուժացումը—հասարակական մասսայական աշխատանքների ծավալման համար:

2. Որո՞նք են կուլտուրական աշխատանքների խնդիրները ակտիվի շրջանում:

3. Ինչո՞ւ համար պիտի ծավալել կուլտուրական աշխատանքը կոոպերատիվ աշխատանքների մասին տրվելիք հաշվետվությունների շրջանում:

4. Ինչո՞ւմն է կայանալու հաշվետու ժողովների կուլտուրական սպասարկման նախապատրաստական աշխատանքը:

5. Ինչո՞ւ համար է անհրաժեշտ հաշվետու վերընտրական կամպանիայի շուրջ կատարվող կուլտուրական աշխատանքներին հատուկ ուշադրություն դարձնել:

6. Ի՞նչ նշանակություն ունի մամուլը կոոպերատիվ հասարակայնության զարգացման գործում:

7. Ի՞նչպես է հարկավոր կառուցել կուլտուրական աշխատանքը հասարակական վերահսկողության ծավալման համար:

8. Ի՞նչպես է հարկավոր դնել կուլտուրական աշխատանքը փայատերերի առաջարկությունների զարգացման ուղղությամբ:

Գործնական պարապմունքներ են հանդիսանալու՝ կազմակերպել զեկուցում «գյուղացիական տնտեսութ· ապրանքայնության աճումն ու մթերումները» նյութի մասին և տանել ցուցադրական կուլտուրական աշխատանք այդ զեկուցման շուրջը:

Կազմակերպել կոոպերատիվ անկյուն տեղական պատի լրագրում:



## Թեմա IV.

*Մասսայական լուսավորություն (2 ժամ):*

Պարապմունքների խնդիրներն են լինելու պարզել, որ

1. Հնգամյակի յերրորդ տարին պիտի հանդիսանա սոցիալիզմի կառուցման և յերկրի ընդհանուր պարտադիր ուսուցման համար մղվող պայքարի տարին: «Գլխավորը այժմ—պարտադիր նախնական ուսուցման անցնելն է: Ես ասում եմ «գլխավոր», վորովհետև այդպիսի անցումը նշանակում է վճռական քայլ կատարել կուլտուր. հեղափոխության գործում» (Ստալին):

2. Սպառողական կոոպերացիան պարտավոր է կատարել կուսակցության մարտական դիրեկտիվը, սպառողական կոոպերացիայի մասնակցությունը ընդհանուր—պարտադիր ուսուցման գործում պիտի արտահայտվի,— ա) այդ աշխատանքների կատարման համար միջոցներ բաց թողնելով, բ) չքավոր աշակերտներին օգնելով (բաց թողնելով հագուստեղեն և կոշիկներ), գ) դպրոցականների համար դպրոցում տաք սննդի բաշխում կազմակերպելով, դ) պոլիտեխնիզացիայի կիրառման գործում՝ արտադրական օգնություն ցույց տալով և ե) ընդհանուր և պարտադիր ուսուցման նշանակության շուրջը լայն բացատրական աշխատանք կատարելով, հետապնդելով կոոպերատիվ հասարակայնությունը այդ խնդիրների լուծման գործում ներգրավվելու նպատակը:

3. Սպառողական կոոպերացիայի վոչ պակաս կարևոր խնդիրն է հանդիսանում նաև՝ անգրագիտության վերացման ուղղությամբ կատարելիք աշխատանքը: «Ընդհանուր, պարտադիր, նախնական ուսուցման և

անգրագիտության վերացման աշխատանքների կատարումը պիտի հանդիսանա կուսակցության մարտական խնդիրը մոտիկ ժամանակաշրջանում» (կուսակցության 16-րդ համագումարի բանաձևերից)։ Սպառողական կոոպերացիան անգրագիտության վերացման աշխատանքը պիտի կատարի ժողովրդական լուսավորության բաժնի հետ միասին, համաձայն միասնական պլանի։

4. Մասսայական կոոպերատիվ լուսավորությունը պիտի հանդիսանա աշխատավորության կուլտուրական մակարդակը բարձրացնող և նրանցից (հատկապես բատրակ-չքավորական, միջակային ու կոլտնտեսական մասսաներից) սպառողական կոոպերացիայի համար նոր կադրեր պատրաստելու միջոցը։

5. Մասսայական կոոպերատիվ լուսավորության սիստեմի մեջ են մտնում,—մնայուն ու շարժական կոոպերատիվ գրագիտության դպրոցները, ակտիվի պատրաստման ու վերապատրաստման կարճատև կուրսերը, կուրս-խորհրդակցությունները, կոոպերատիվ առարկայական ու թեմատիկ խմբակները։

6. Կոոպերատիվ գրագիտության դպրոցները, վերացնելով կիսագրագիտությունն ու բարձրացնելով լսողի կուլտուրական մակարդակը, նպատակ ունեն հասարակական աշխատանքներում փորձված ընկերներից, խորհրդային տնտեսությունների և մեքենատրակտորային կայանների բանվորներից ու չքավոր-միջակային կոլտնտեսական մասսաներից պատրաստելու ակտիվ կադրեր, նրանցից մի քանիսին հետագայում կոոպերատիվ բարձրագույն տիպի ուսումնական հաստատություններ ուղարկելու համար։



7. Կոոպերատիվ թեմատիկ-առարկայական խմբակների կազմակերպումը նպատակ ունի կարճ ժամանակում տալու ակտիվիստներին—հատկապես կիսագրագետ բանվորներին, բատրակ-չքավորական մասսաներին մինիմալ կրթություն, այնպես որ նա կարողանա համակերպվել կոոպերատիվ աշխատանքների պրակտիկ հարցերին գյուղում և հատկապես այն բնագավառում, որում նա անմիջականորեն աշխատում է։

8. Կարճատև կուրսերը, որոնք կազմակերպվում են շրջանային սպառողական ընկերությունների կողմից՝ հատուկ հարցերի շուրջը, պիտի նպատակ ունենան կոոպերատիվ ակտիվի պատրաստումը և առաջին հերթին խորհտնտեսությունների, մեքենատրակտորային կայանների բանվորներից ու չքավոր միջակային կոլտնտեսական մասսաներից։

9. Լսողների ընտրության ժամանակ անհրաժեշտ է կիրառել խիստ դասակարգային գիծ։ Լսողներին վերցնել անմիջականորեն խորհրդային տնտեսությունների, մեքենատրակտորային կայանների բանվորների և չքավոր-միջակային կոլտնտեսական մասսաների կողմից։

10. Հաշվի առնելով կին մասսաների ակտիվության աճումը կոոպերատիվ շինարարության մեջ, անհրաժեշտ է դնել կանանց խոշոր չափով կոոպերատիվ ուսուցման մեջ ներգրավելու խնդիրը—ոչ պակաս քան լսողների ամբողջ կազմի 50 տոկոսը պիտի լինեն կանայք։

11. Ուսուցման մասսայական ձևերի հետ միասին անհրաժեշտ է կիրառել նաև զեկուցումների և դասախոսությունների ձևը, ըստ կոոպերատիվ հարցերի՝ վո-

բոշակի ցիկլերով. օրինակ,—ա) կոոպերացիայի թեորիան և պատմությունը, բ) Լենինի կոոպերատիվ պլ-մար ըմբռնելի դարձնելու, ինչպես նաև նրանց մեջ մեծ մասսայական հետաքրքրություն շարժելու նպատակով՝ դասախոսությունների, կամ զեկուցումների կարդալու ժամանակ օգտագործել տեսանելի միջոցներ, ինչպիսիններն են՝ մոգական լապտերները, դիապոզիտիվները և կինոժապավենները։

Առարկան, կամ դասախոսությունը լսողների համար ըմբռնելի դարձնելու, ինչպես նաև նրանց մեջ մեծ հետաքրքրություն շարժելու նպատակով՝ դասախոսությունների, կամ զեկուցումների կարդալու ժամանակ օգտագործել տեսանելի միջոցներ, ինչպիսիններն են՝ մոգական լապտերները, դիապոզիտիվները և կինոժապավենները։

12. Կուլտուրական աշխատանքների խնդիրների մեջ է մտնելու.—պրոպագանդա հեռակա կոոպերատիվ ուսուցման համար—ներգրավելով ուսուցման մեջ ինչպես կոոպերացիայի ապարատում աշխատող փայատերերին, նույնպես և շարքային փայատերերին, հատկապես չքավոր-միջակային կոլտնտեսական մասսաներից։

| Վերամշակման ծրագիր | Աշխատանքի նյութ |
|---|---|
| 1. Հնգամյակի չորրորդ տարին մեր երկրի ընդհանուր ուսուցման համար մղվող պայքարի վճռական տարին է։ | Սպառողական կոոպերացիայի II համագումարի բանաձևերը։ |
| 2. Սպառողական կոոպերացիան ընդհանուր ուսուցման և անգրագիտության վերացման ֆրոնտում։ | Բուբնով,—Ժողովրդական լուսավորության սիստեմի մասին։ |
| 3. Մասսայական կոոպերատիվ լուսավորության սիստեմը։ | Անգրագիտության վերացումը քաղաքում և գյուղում։ Պետհրատ, 1929 թ.։ |



| | |
|---|---|
| 4. Կանանց ու յերիտասարդության ներգրավումը կոոպերատիվ ուսուցման մեջ։ | Ժողովրդական լուսավորության համամիութենական 3-րդ խորհրդակցության բանաձևերը։ |
| 5. Հեռակա կոոպերատիվ ուսուցում։ | |

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ համար ընդհանուր ուսուցման համար մղվող պայքարը համարվում է վճռական քայլ կուլտուրական հեղափոխության գործում։

2. Ի՞նչպիսի մասնակցություն պետք ունենա սպառողական կոոպերացիան ընդհանուր ուսուցման և անգրագիտության վերացման գործում։

3. Ո՞րն է կոոպերատիվ լուսավորության սիստեմը։

4. Ինչո՞ւ համար է կարևոր կանանց ու յերիտասարդության ներգրավումը կոոպերատիվ ուսուցման մեջ։

5. Ի՞նչ է նշանակում հեռակա կոոպերատիվ ուսուցում։

Գործնական պարապմունքներ են հանդիսանալու՝ դպրոցի լսողներից կազմված բրիգադայի միջոցով կազմակերպել ստուգատես, պարզելու համար, թե ինչպես է ծավալված մասսայական լուսավորության աշխատանքը։ Տալ գործնական առաջարկներ այդ աշխատանքների դրվածքը լավացնելու ուղղությամբ։

## Թեմա V.

### Գեղարվեստական և քաղլուսավարական աշխատանք։

Պարապմունքների նպատակն է լինելու պարզել, վոր

1. Կուլտուր-քաղաքական աշխատանքների ընդհանուր սիստեմում հսկայական դաստիարակչական նշանակություն ունի գեղարվեստական, քաղլուսավարական աշխատանքը, ինչպես խմբակային (գյուտարարական, գրական, դրամատիկական, կենդանի լրագրի, յերաժըշտական, նույնպես և արտախմբակային (ինքնագործունեության յերեկոներ, «կոլտնտեսականի» յերեկոներ, կանանց ու յերիտասարդության յերեկոներ, կարմիր կնունք, զբոսանք, գեղարվեստական ընթերցումներ, մասսայական խաղեր և այլն)։

2. Խոշոր դաստիարակչական նշանակություն ունի կոոպերացիայի աշխատանքների մասին մասսայական ինֆորմացիա կազմակերպելը՝ գեղարվեստականորեն ձևավորված կոոպերատիվ անկյուն—(ցուցահանդեսների, առանձին դիագրամաների, կոոպերացիայի աշխատանքների մասին կազմված տեղեկագրերի, լոզունգների և այլնի) միջոցով, հարկավոր է այդ աշխատանքների մեջ ներգրավել գյուտարարական խմբակները, դնելով նրանց աշխատանքների լայնացման և նորերի կազմակերպման խնդիրը։

3. Կոոպերացիայի աշխատանքների մասին յեղած տվյալները գեղարվեստականորեն ձևակերպելիս պիտի այդ աշխատանքները դնել այնպիսի ձևով, վորպեսզի նրանք հանդիսանան սպառողական կոոպերացիայի այդ աշխատանքներում յեղած թերությունները արմատախիլ անելու կոչ անող ագիտացիայի միջոց։



Որինակ՝ բնակչության կոոպերացման տվյալները, վորոնք զետեղվելու յեն կոոպերատիվ անկյունի ցուցահանդեսում, պիտի խոսեն Լենինի՝ բնակչության գըլխովին կոոպերացման յենթարկելու պլանի կատարման աստիճանի մասին։ Բնակչության միջոցները և ներքին ռեսուրսները մոբիլիզացիայի յենթարկելու տվյալները պիտի խոսեն՝ պետական միջոցները սպառողական կոոպերացիայի չըջանառությունից ազատելու և յերկրի ինդուստրացմանը տրամադրելու աստիճանի մասին և այլն։

4. Հատկապես պիտի կենսագործել սոցիալիստական մրցության ու հարվածայնության արդյունքները արտահայտող տվյալների ցուցադրումը, վորպեսզի պիտի ոգտագործվի աշխատանքների հասարակական ձևերի զարգացման համար։ Որինակ՝ ցուցադրել առանձին բրիգադաների և առանձին ակտիվիստների փայակուտակման, կոոպերացման, մթերման և այլ բնագավառներում կատարած աշխատանքների արդյունքները։

5. Տեղական կոոպերացիայի աշխատանքների մասին յեղած նյութերը անպայման պիտի մտցնել կենդանի լրագրի, ինքնագործունեության յերեկոների, փոքր թատրոնակ. ձևերի մեջ և այլն։ Դեպքերը պիտի պատկերացնել գործող անձանց գեղարվեստական ձևավորմամբ, ոգտագործելով կենդանի լոզունգներ, դիագրամաներ և այլն։

6. Խմբակային գեղարվեստական ինքնագործունեության համեմատաբար տարածված ձևերը գյուղում հանդիսանում են դրամատիկական-թատերական խմբակները։ 2–3 գործողություններից բաղկացած, ինչ-

պես նաև այսօրվա խնդիրներից չբխող պիեսների կազմակերպումներին պետք վերջ տալ: Անհրաժեշտ է վերակառուցել ինքնագործունյա արվեստի ֆրոնտում աշխատողների աշխատանքը, խոշորացնելով խմբակների կազմը, ծավալելով դաստիարակչական աշխատանքը, մտցնելով մրցանակաբաշխությունների և սոցիալիստական մրցության սիստեմը՝ աշխատանքների լավագույն գրվածքի համար, ներգրավելով խմբակների կազմում հասակավոր բնակչության ներկայացուցիչներին և լավացնելով ռեպերտուարների վորակը:

7. Զանազան տեսակի տոնակատարությունների ու կամպանիաներին սպասարկելու ժամանակ, պիեսաների անբավարարության, մանավանդ որվա չարիքը արտահայտող պիեսների անբավարարության պայմաններում՝ չափազանց անհրաժեշտ է մասնակցել փոքր թատրոնական ձևերի զարգացմանը և լինել նրա մարտիկը (կենդանի լրագրեր, ինքնագործունեյության յերեկոներ, համերգներ և այլն): Թատրոնական փոքր ձևերի ռեպերտուար են ծառայելու՝ «Կարմիր բաճկոն» ամսագրի հավելված, «Գյուղական թատրոն» ամսագրի մեջ տպված նյութերը: «Կար. բաճկոն» կենդանի լրագրերի ելույթներում պետք լուսաբանվեն կոոպերացիայի աշխատանքներին, նրանց հաջողություններին ու թերություններին վերաբերող հարցերը: Կոոպերացիայի աշխատանքներին վերաբերող առանձին մոմենտները կարելի յե արտահայտել նաև առանձին փոքրիկ հոդվածներով ու քառյակներով:

8. Տեղական նյութերի և կոոպերացիայի աշխատանքներին վերաբերող հարցերի մշակման համար անհրաժեշտ է օգտագործել տեղական ուժերը, ներ-



գրավելով նրանց գյուղական խմբակում և կազմակերպելով նրանց համար համապատասխան ուսուցում:

9. Վերջին յերկու տարիները հատկապես բնորոշ են խոշոր արդյունաբերական կենտրոններից՝ պրոֆեսիոնալ և ինքնագործունյա թատերական բրիգադների գյուղեր ուղարկելով: Նրանց գալը պետք օգտագործվի տեղական խմբակների հրահանգման համար, օգտագործելով նրանց միաժամանակ տեղական կոոպերատիվի նյութերը իրենց ելույթներում լուսաբանելու համար:

10. Ինքնագործունեյության յերեկոները, գեղարվեստական ընթերցումները, կարմիր կնունքները, զբոսանքները և մասսայական խաղերն ու պարերը պետք փոխարինեն հասակավոր ու յերիտասարդ բնակչության հին ձևի զվարճություններին: Զվարճության այդ ձևերը պետք ծառայեն հարբեցողության, սրիկայության, խաղամոլության և ժամանակը դատարկ ձևով կորցնելու հին ձևերի վերացման հիմնական միջոցներ: Ինքնագործունեյության յերեկոները—խրճիթ-ընթերցարաններում, վուլգ. պարերի և այս կարգի հին կենցաղին վերաբերող խաղերի կազմակերպման փոխարեն՝ յերգեր, արտասանություններ, քաղաքական զրույցներ ու մասսայական խաղեր կազմակերպելու միջոցով—ստեղծում են հրաշալի հանդիստ ու բավականություն: Կոոպերացիայի հետ միասին կազմակերպված գեղարվեստական յերեկոների միջոցով գեղարվեստական ընթերցումների կազմակերպելն ու գեղարվեստական յերկերից հատընտիր կտորներ պատմելը հանդիսանում է վոչ միայն նպատակահարմար

ժամանց, այլև խրախուսում է այդ գեղարվեստական յերկերի ինքնուրույն ընթերցմանը։

## Հարց ու պատասխանի յերեկոներ

11. Համեմատաբար տարածված մասսայական յերեկոների ձևերը գյուղերում՝ հանդիսանում են հարց ու պատասխանների յերեկոները (վորպես մասսայական տեղեկատու աշխատանքի ձևեր), կոոպերատիվ վիճակախաղերը և կոոպերատիվ շուկաները (базары)։

12. Հարց ու պատասխանների յերեկոներին պետք է տալ թեմատիկ բնույթ, քննության դնելով վորոշակի թեմաներ. օրինակ՝ «Սպառողական հարցերը», «Կոոպերացիայի մթերման աշխատանքը», և այլն։ Նյութերը պետք է ընտրել որվա այրող խնդիրներից, այնպիսի խնդիրներից, վորոնք հետաքրքրում են գյուղացիներին։

13. Հարց ու պատասխանի յերեկոների կազմակերպումից առաջ պետք է կատարել նախապատրաստական աշխատանքներ, վորպիսին արտահայտվելու է նախապես հարց ու պատասխանի առարկա հանդիսացող նյութը աչքի ընկնող տեղերում կախ տալով, հարցերը հավաքելով և տրվող հարցերին պատասխանող ու արծարծված խնդիրների առթիվ յեզրափակման խոսք ասող ընկերներ ընտրելով։

14. Նախապատրաստական աշխատանքներ պետք է կատարել նաև կոոպերատիվ վիճակախաղեր և կոոպերատիվ շուկաներ կազմակերպելուց առաջ, նախապես կախ տալով հայտարարություններ այն կոոպերատիվ հարցերի մասին, վորոնք վերաբերում են յերեկոյին, և ցույց տալով այն գրքերի անունները, վորոնք անհրաժեշտ են յերեկոյին մասնակցել ցանկացողին կարդալու համար, վորպեսզի նա պատրաստված լինի այն հարցերի շուրջը, վորոնք քննվելու յեն հարց ու պատասխանի յերեկոյում։ Լավագույն պատասխանողներին պետք է տալ մրցանակներ, վորպեսզի դրանով շահագրգռվածություն առաջ բերվի հարց ու պատասխանների յերեկոներում ավելի լայն մասնակցողներ ընդգրկելու համար։ Հարց ու պատասխանների յերեկոները աշխուժացնելու համար պետք է նվագել յերաժշտական համարներ (փողային և լարային նվագախումբ, գարմոշկա և այլն)։ Վիճակախաղը վերջանալուց հետո կարելի յե կազմակերպել մասսայական խաղեր։



| Վերամշակման ծրագիր | Աշխատանքի նյութ |
|---|---|
| 1. Կոոպերացիայի աշխատանքների մասին մասսայական ինֆորմացիա կազմակերպելը գեղարվեստական ձևավորմամբ։ | 1. «Ինքնագործունյա գեղարվեստական աշխատանքների նոր ետապները» „Главискусство". Изд. Теакинопечать, 1930 г. |
| 2. Գեղարվեստական ինքնագործունեյության դերն ու նշանակությունը գյուղում (դրամատիկական խմբակներ, «Կարմիր Բանկոն», Թատրոն-Պետրուշկան և այլն)։ | 2. Սուբբոտին—Շրջանի գեղավարումը և խմբակի կազմակերպումը. Հրատարակություն «Կրեստյանսկայա Գազետա»-յի։ 1929 թ.։ |
| 3. Գրական խմբակների կազմակերպման խնդիրները։ | 3. Ինտենզոն— «Գեղարվեստական աշխատանքը կոլխոզում». Հրատարակություն «Կրեստյանսկայա Գազետա»-յի 1929 թ.։ |
| 4. Ինքնագործունեյության յերեկոները, վորպես կենցաղի նոր ձևեր։ | 4. «Դերեվենսկի տեատր» ամսագիր. Հրատարակություն «Կրեստյանսկայա Գազետա»-յի։ |

5. Հարց ու պատասխանների երեկոները և նրանց տարբեր տեսակները— կոոպերատիվ վի-ճակախաղեր և կոոպերատիվ ճուկաններ:

5. Դոլգանովա Բոդենբերգ— «Գեղարվեստական խոսքը ըն-թերցանության մեջ և բեմի վրա»:

6. Զելինկո— «Մասսայական ժողովրդական պարեր»:

7. Զելինկո—«Մասսայական խաղեր»:

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ նշանակություն ունի կոոպերացիայի աշ-խատանքների ցուցանիշների գեղարվեստական ձևա-վորումը:

2. Ի՞նչ նպատակ պիտի հետապնդենք մենք կոո-պերացիայի աշխատանքներին վերաբերող նյութերի գեղարվեստական ձևավորմամբ:

3. Ինչո՞ւ համար է կարևոր սոցիալիստական մըր-ցության, հարվածայնության և աշխատանքների հա-սարակական մյուս ձևերի արդյունքների ցուցա-դրումը:

4. Ի՞նչպիսի խնդիրներ են դրված այժմ դրամատի-կական խմբակների առաջ:

5. Տվեք թեմաներ՝ Թատրոն-Պետրուշկայի յե-լույթների համար:

6. Ի՞նչպես կառուցել մտքերի փոխանակությունը «Գյուղի սպասարկումը արդյունաբերական ապրանք-ներով, կապված հացամթերման հետ» հարցի մասին:

7. Ինչո՞ւ համար պիտի կազմակերպել դրական խմբակներ:

8. Ի՞նչպես պիտի օգտագործել արդյունաբերական



կենտրոններից գյուղերը մեկնած ինքնագործունյա և պրոֆեսիոնալ թատերական բրիգադները:

9. Ի՞նչպիսի դեր ու նշանակություն ունեն ինքնա-գործունեության երեկոները նոր կենցաղի կազմա-կերպման գործում:

Գործնական առաջադրություններ են հանդիսանա-լու՝ կազմակերպել ինքնագործունեության երեկո «կոլլեկտիվացումը և նոր կենցաղը» նյութի մասին. կազմակերպել գյուղացիների կարծիքների հավաքը՝ ինքնագործունեության երեկոյի մասին: Դպրոցում քննության առնել երեկոյի կազմակերպման ընթացքում տեղի ունեցած սխալները:

## Թ ե մ ա VI

*Աշխատանքը գրքի ֆրոնտում:*

Պարապմունքների խնդիրն է լինելու պարզաբանել, որ

1. Մեր շինարարության առաջ ծառացած հսկայա-կան տնտեսական-քաղաքական խնդիրները, կապված ամբողջ ճակատով սոցիալիստական արշավ կազմակեր-պելու հետ՝ պարտավորեցնում են մեզ կատարելու կոնկրետ աշխատանք գիրքը և պարբերական մամուլը մասսաների մեջ տարածելու ուղղությամբ և վերակա-ռուցել այն՝ նոր կուլտուրական ձևերով— պահանջի կազմակերպում, ընթերցողի դաստիարակում, աշխա-տավորական մասսաներին սոցիալիստական շինարարու-թյան խնդիրների շուրջը մոբիլիզացիայի ենթարկելը և այլն:

2. Գրատարածման աշխատանքը պիտի հանդիսա-նա շրջանի կուլտուրական շինարարության անբաժան

մասը: Գյուղում զարգացող կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների շինարարության կապակցությամբ, անհրաժեշտ է արագությամբ ծավալել գրքի մասսայական աշխատանքը գյուղի սոցիալիստական սեկտորում և անհատական տնտեսությունների շրջանում, վորպես նրանց կոլեկտիվ տնտեսությունների մեջ ներգրավելու միջոց:

3) Գրքի հրահանգիչներն ու խանութներում աշխատող գրաշխատակիցները հանդիսանալու յեն գրատարածման կազմակերպողներն ու հասարակական գործիչները: Շրջանի տնտեսության և բնակչության կուլտուրական մակարդակի ուսումնասիրության հիման վրա նրանք պետք գիտենան, թե ինչպիսի գրքեր է անհրաժեշտ տարածել մասսաների մեջ, և ակտիվորեն պետք մասնակցեն շրջանային սպառողական ընկերությունների կողմից կատարվող գրատարածման պլանավորման աշխատանքներին:

4. Գրատարածման միավորների աշխատակիցները (գրախանութների, գրաբաժինների, գրադարանների, կիոսկների, շարժական գրավաճառանոցների և այլն) պարտավոր են ուշադիր կերպով սպասարկել ընթերցողներին: Ընթերցողներին գիրք առաջարկելու աշխատանքների մեթոդները պետք լինեն զանազանակերպ, ելնելով ընթերցողների սոցիալական կազմից:

5. Գրատարածման աշխատանքների դրվածքի հաջողությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է ներգրավել հասարակայնության ուշադրությունը. այդ աշխատանքները կատարելու համար՝ կոմբջիջների, Լ. Կ. ՑԵ. Մ. բջիջների, պիոներական ջոկատների,



գյուղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմակերպել գրատարածման կազմակերպիչների և շրջիկ գրավաճառների կադրեր և գրքի բարեկամների խմբակներ:

6. Գրատարածման աշխատանքը պետք կատարվի գրատարածման առանձին կետերի և առանձին աշխատակիցների միջև սոցիալիստական մրցության պայմանագրեր կնքելու, հարվածայնության, գրքի յերթեր, կարնավալներ և հասարակական աշխատանքների այլ ձևեր ծավալելու հիման վրա:

7. Անհրաժեշտ է ուժեղացնել գրատարածման աշխատանքները ազգային փոքրամասնության և առանձնապես կուլտուրապես հետամնաց շրջաններում կազմակերպելով սիստեմատիկ հրահանգման աշխատանքներ, թե ինչպես պետք գրքի ու թերթի տարածման աշխատանք կատարեն ազգային փոքրամասնության և խառն բնակչություն ունեցող շրջանների գրաշխատակիցները, ոգնելով նրանց՝ ազգային շրջանների հասարակական աշխատանքներ, վորպեսզի արտահայտվելու յեն՝ րակների ու գրաբաժինների շուրջը:

8. Խիստ կարևոր նշանակություն է ստանում ներկայումս պարբերական մամուլի տարածման կազմակերպման աշխատանքը— լրագրեր, ամսագրեր և այլն: Սպառողական կոոպերացիան հանդիսանալով գրատարածման միակ որգանը Հայաստանում և ունենալով դրա համար համապատասխան ցանց՝ պետք կազմակերպի պարբերական մամուլի տարածումը, գրատարածման աշխատանքներին հավասար:

9· Հաշվի առնելով մեր յերկրի առաջ կանգնած խնդիրը, վորպիսին է՝ անգրագիտության վերացումը

1931 թվին և ընդհանուր նախնական պարտադիր ուսուցման կազմակերպումը—սպառողական կոոպերացիայի խնդիրն է հանդիսանում ապահովել այդ աշխատանքները համապատասխան գրքերով ու դասագրքերով և պայքարել անգրագիտության ռեցիդիվի դեմ, համապատասխան ժողովրդական (популярный) գրականության տարածման, ինչպես նաև հատուկ լրագրերի միջոցով, վորոնք լույս են տեսնում անգրագիտության վերացման գործին նպաստելու համար:

10. Սպառողական կոոպերացիայի մասնակցությունը ինչպես մնայուն, նույնպես և շարժական գրադարանների աշխատանքներին՝ պիտի արտահայտվի գրադարաններին կից կոոպերատիվ անկյուններ կազմակերպելու ձևով, ինչպես նաև ճաշարաններին ու կուլտուրական թեյարաններին կից ընթերցարաններ կազմակերպելով:

11. Անհրաժեշտ է մշտական հսկողություն սահմանել գրադարաններին կից կոոպերատիվ անկյունների նկատմամբ, լրացնել այդպիսիք և սիստեմատիկ ստուգումների միջոցով առանձնացնել հնացած և իդեոլոգիապես անհամապատասխան ու վնասակար գրքերը:

12. Գրատարածման կետերից ընթերցողներին հատուկ վճարով—ընթերցանության համար—գրքեր տալու ձևը պիտի գործադրել և ավելի լայն ծավալելով կազմակերպել այդպիսին:

13. Գրատարածման աշխատանքների մասսայական ձևերի շարքին պիտի դասել՝ շրջանային սպառողական ընկերության հաշվետվությունը գրատարածման աշխատանքների մասին, ժողովներում, համագումարներում, կոնֆերենցիաներում, «կոլտնտեսականի տնե-



րում», և ամեն տեսակի մասսայական-գեղարվեստական յերեկույթներում գրքերի ցուցահանդեսներ կազմակերպելը, գրատարածման կետերում գրքի ընտրության խնդիրների շուրջը կոնսուլտացիաներ կազմակերպելը, գրքի նշանակության մասին հատուկ զեկուցումները կարդալը, յերեկույթների, զրույցների, գեղարվեստական ընթերցումների, գրքի և գրականության յերեկույթների կազմակերպումը և այլն:

14. Գրքի յերեկոները կարելի յե կազմակերպել մասսայական հարց ու պատասխանների յերեկոների ձևով: Յերեկոների կազմակերպման կարգը մոտավորապես հետևյալը պիտի լինի,— նշանակվում են վորևէ հարցի մասին գրքեր (վոչ ավելի 5 հատից) կարդալու համար, վորոնց բովանդակությունից հարցեր կտրվեն յերեկույթի ժամանակ: Նախապես ընտրվում են «գրքի յերեկո»-յին մասնակցել ցանկացող ընկերները, վորոնց համար կազմակերպելու յե խմբակային, կոլեկտիվ ընթերցանություն: Պիտի գործադրել լավ պատասխանողներին մրցանակ տալու մեթոդը: Գրքի յերեկոն կարող է վերջանալ գեղարվեստական, կամ համերգային բաժնով, ինչպես նաև մասսայական խաղերով:

15. Գրքի յերեկոների ավելի բարդ ձևերից մեկն է հանդիսանում խրճիթ-ընթերցարաններում և կուլտուրական շինարարության տներում գրական յերեկոների կազմակերպումը, վորոնք պիտի կազմակերպվեն տեղական կուլտուր-լուսավորության աշխատողների ընդհանուր ուժերով: Այդպիսի յերեկույթների կազմակերպումը նպաստում է գրականության շուրջը հետաքրքրություն զարգացնելուն և կարդացածը հասկանալուն ու վերընթերցելուն: Այդ յերեկոները հարմար են մեր սոցիալիստական շինարարության հարցերը կենդանի ու

հետաքրքիր ձևով մասսաների մեջ փոխադրելու համար: Կարելի յե օրինակ՝ կազմակերպել յերեկոներ,— ա) «կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների շինարարության արտացոլումը ռուսական գրականության մեջ», բ) «Դեմյան Բեդնին վորպես գյուղացիական բանաստեղծ», գ) «գյուղի հին և նոր կենցաղի արտացոլումը ռուսական գրականության մեջ», «գեղջկուհու արտացոլումը ժամանակակից գրականության մեջ» և այլն:

15. Գրական յերեկոների կազմակերպման բարդության նկատառումով անհրաժեշտ է ուշադիր կերպով նախապատրաստվել նրա համար: Գրական յերեկոներ կազմակերպելիս պետք է նախորոք հաշվի առնել կուլտուրական ուժերը և այդպիսին կազմակերպել հատկապես այն վայրերում, վորտեղ կան գրական և գյուղթղթակիցների խմբակներ:

| Վերամշակման ծրագիր | Աշխատանքի նյութ |
|---|---|
| 1. Գրքի տեղաշարժման ակտիվ մեթոդները: | 1. Սիդորով Ա. Գ.—Գրքի տարածումը գյուղում: |
| 2. Հասարակայնության մոբիլիզացիան գրատարածման աշխատանքների շուրջը: | 2. Ամսագրեր.— «Նա կնիժնոմ ֆրոնտե». Պետհրատ և «Կնիգա-ի կոոպերացիա» —Ցենտրոսոյուզի: |
| 3. Մասսայական քաղաքական լուսավորության աշխատանքը գրքի միջոցով: | |
| 4. Գրքի յերեկոների կազմակերպումը: | |



## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպիսի մեթոդներին ենք մենք անվանում գրքերի տեղաշարժման ակտիվ մեթոդ:

2. Ի՞նչպիսի դեր ունեն գրահրահանգիչն ու գրաաշխատակիցը գրատարածման կազմակերպման գործում:

3. Վորո՞նք են ընթերցողին գիրք առաջարկելու մեթոդները:

4. Ի՞նչպես պետք է ներգրավել հասարակայնությունը գրատարածման աշխատանքներում:

5. Ի՞նչպես պետք է աշխատել գրատարածման գործում՝ ազգային փոքրամասնության և խառն շրջաններում:

6. Վորո՞նք են սպառողական կոոպերացիայի խնդիրները պարբերական մամուլի տարածման գործում:

7. Ի՞նչպես պետք է կազմակերպել պայքարը անգրագիտության ռեցիդիվի դեմ—գրքի միջոցով:

8. Սպառողական կոոպերացիան ի՞նչպես պետք է կատարի գրադարանային աշխատանքը:

9. Ի՞նչպիսի մասսայական-քաղաքական լուսավորության աշխատանք կարելի յե կատարել գրքի միջոցով:

10. Ի՞նչպես կազմակերպել գրքի յերեկոներ:

Գործնական պարապմունքներ են հանձնարարելու՝

սովորողներից կազմված բրիգադայի միջոցով հետազոտել շրջանային սպառողական ընկերության աշխատանքները և մատնանշել այդ աշխատանքների դրվածքը լավացնելու վերաբերյալ միջոցներ:

## Թ ե մ ա VII.

### Կինո-ֆոտո աշխատանք:

Պարապմունքների խնդիրն է լինելու պարզաբանել, վոր

1. Համարելով կինոն վորպես «ամենակարեվորը բոլոր արվեստներից» (Լենին)—պետք հանդիսանա բնակչության կուլտուրական մակարդակը բարձրացնող և կենցաղը սոցիալիստական հիմունքներով վերակառուցման յենթարկող ամենաուժեղ և գործնական զենքը գյուղում: Սպառողական կոոպերացիայի խնդիրն է հանդիսանալու կինոսպասարկության առավելագույն չափով տեղաշարժ կատարել գյուղում, լայնորեն ծավալելով մասսայական քաղաքական-լուսավորության աշխատանքը կինոյի շուրջ, հատուկ ուշադրություն դարձնելով գյուղի սոցիալիստական սեկտորը կինո աշխատանքներով սպասարկելու գործի վրա:

2. Պետք խստությամբ պայքարել կինո ցուցադրումների ժամանակ տեղի ունեցող անմտությունների ու «պատեցնելու» պախարակելու ձևի դեմ: Ցուրաքանչյուր լավ կազմված, բովանդակալից կինո ժապավենը պետք օգտագործվի խորացրած քաղաքական լուսավորության աշխատանք կատարելու համար, կազմակերպելով կինոյի շուրջը զրույցներ, զեկուցումներ, դասախոսություններ, մասսայական գեղարվեստական յերեկույթներ, դատեր և այլն:

3. Հաշվի առնելով գյուղական դիտող կադրերի կուլտուրական թույլ մակարդակը, անհրաժեշտ է պատկերի ցուցադրումից առաջ տալ կարճառոտ ներածական, նպատակ ունենալով դիտողների ուշադրությունը հրավիրելու այն մոմենտների վրա, վորոնք կարող են



զեկուցողի պատմած նյութի իլլյուստրացիան հանդիսանալ: Մակագրությունների բարձրաձայն ընթերցանությամբ (կիսագրագետները չեն կարող կարդալով հասնել) և պատկերի բովանդակության անհասկանալի տեղերում ռեպլիկաներ բաց թողնելու միջոցով հասկացնել դիտողներին պատկերի վողջ բովանդակությունն ու միտքը:

4. Զրույցը նկարը դիտելու շուրջը պետք կազմակերպվի նկարի ցուցադրումից անմիջապես հետո կամ նրա հաջորդ որը: Զրույցը պետք կազմակերպվի նկարի բովանդակությունից բղխող նյութի շուրջը և նախապես կազմված ու հայտարարված ծրագրով, վորպիսին ունենալու յե իր ձեռքի տակ զրույցի ղեկավարը: Ծրագրի յուրաքանչյուր կետը պետք պատկերավորվի ցուցադրված նկարի համապատասխան նյութով:

5. Գյուղական պայմաններում գիտական կինո նկարներ ցուցադրելիս պահանջվում է նախապես կատարել լուրջ աշխատանք, ներգրավելով դրանցում գյուղի կուլտուրական ուժերը—գյուղատնտեսներ, բժիշկներ, ուսուցիչներ և այլն: Գիտական կինոնկարներից առաջին հերթին պետք օգտագործել՝ գյուղական տնտեսությունը, կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների շինարարության հարցերը, գյուղատնտեսական մեքենաների օգտագործումը, կաթնատնտեսության դրվածքը, բանջարաբուծությունը և այլն լուսաբանող նկարները: Անհրաժեշտ է լայն չափով օգտագործել նաև կոոպերատիվ-գիտական նկարները—որինակ՝ որինակելի խանութներ, նավթաշրջիկները, մթերային սայլակները, ավտոմատ կշեռքները, պահեստային տնտեսությունը և այլն:

6. Կինոն պետք օգտագործել նաև զանազան մաս-

տայական յերեկույթներ կազմակերպելու համար: Օրինակ հակակրոնական, հակաալկոհոլային, ինչպես նաև յերկրի պաշտպանության և այլ թեմաներով կազմակերպված յերեկույթները, պետք է լուսաբանվեն համապատասխան կինո նկարներով, ծավալելով դրանց շուրջը մասսայական աշխատանք:

Կինո յերեկույթներ պետք է կազմակերպել նաև դիսպուտի կարգով, արծարծելով այն միտքը, թե ինչպիսի կինո նկարներ են հարկավոր գյուղական դիտողի համար, օրինակ՝ «Հինը և նորը» կինո նկարը: Այդ դիսպուտները բացի դաստիարակչական նշանակությունից, մեծ նշանակություն ունեն նաև կինո-նկարների արտադրության վրա ազդեցություն ունենալու տեսակետից: Այս կամ այն նկարի շուրջը կազմակերպված մտքերի փոխանակության արդյունքները պետք է հրապարակել մամուլում և ուղարկել համապատասխան կինո-կազմակերպության:

8. Կինոյի շուրջը մասսայական աշխատանքներ կատարելու ձևերից մեկն է հանդիսանում մաքուր կինո ժապավենների օգտագործումը՝ փոխադրելով նրա վրա տեղական կոոպերացիայի աշխատանքներին վերաբերող տվյալները,— կոոպերացում, միջոցների հավաքում, հումույթի և այլնի մթերում, սպառողական կոոպերացիայի ցանցերի, բանջարանոցների տարածությունը և այլն:

Օգտագործելով նաև սոցիալիստական մրցության ու հարվածայնության տվյալները, փոխադրելով կինո-ժապավենների վրա լավագույն հարվածայիններին, կինո ժապավենների վրա փոխադրել նաև հասարակական-քաղաքական յերեվույթները, վորպիսիներն են՝ չարամտորեն փայավճար չմուծողները, հաց և հու-



մույթ չհանձնողները, լոդրերը, աշխատանքի դասալիքները և այլն:

9. Կինոաշխատանքը գյուղում պետք է հանդիսանա մասսաների ակտիվության մեր տնտեսական և կուլտուրական շինարարության խնդիրների շուրջը մոբիլիզացիայի յենթարկող գլխավոր միջոցներից մեկը, այնքան վորքան կինոյի շուրջը ավելի հեշտ է ակտիվի կազմակերպումը: Գյուղացիների ուշադրությունը գյուղի կինոաշխատանքներում ներգրավելու գործում մեծ դեր ունեն կատարելու Խ. Կ. Բ.-ը բջիջները (Խորհրդային կինոյի բարեկամների ընկերության): Այդպիսի բջիջի կազմակերպումը հանդիսանալու յե կոոպերատիվ բյուրոյին կից կազմակերպված կուլտուրական հանձնաժողովի անմիջական գործը: Խ. Կ. Բ. Ը. բջիջի աշխատանքների խնդիրներն են հանդիսանում,—

ա) Օգնել շրջանային սպառողական ընկերությանը կինոաշխատանքների կատարման գործում, բ) օգնել շրջանային սպառողական ընկերությանը կինոյի շուրջը մասսայական աշխատանքներ կատարելու ժամանակ, գ) կազմակերպել կինո-լիբրետոների պատրաստման խմբակներ, դ) կինո-տեխնիկայի հարցերի ուսումնասիրությունը և այլն:

10. Անհրաժեշտ է զարգացնել ֆոտո-աշխատանքը, վորպիսին հանդիսանում է սպառողական կոոպերացիայի աշխատանքի նոր տեսակը: Սպառողական կոոպերացիայի միջոցով ֆոտո-ապարատներ ու նրանց վերաբերյալ պարագաներ հասցնել գյուղին, կազմակերպել ֆոտո-խմբակներ, կազմակերպել ֆոտո-նկարահանումներ և թղթակցության ձևով հասցնել մամուլի օրգաններին և կապ հաստատել ֆոտո ու կինո

աշխատանքների մեջ.—սա սպառողական կոոպերացիայի հիմնական խնդիրները՝ փոստ—աշխատանքների նկատմամբ:

## Գյուղի ռադիոֆիկացիան

1. Գյուղի ռադիոֆիկացիայի գործում սպառողական կոոպերացիայի վրա դրված են խոշոր պարտականություններ: Համաձայն Փոստհեռժողկոմատի հետ կնքված պայմանագրային համաձայնության, սպառողական կոոպերացիան իր վրա յե վերցրել այն գյուղական վայրերի ռադիոֆիկացիան, վորտեղ բացակայում է հեռախոսային ցանցը: Ռադիոֆիկացիան պիտի կատարվի տրանսլյացիոն հանգույցների կազմակերպման և հասարակական վայրերում բարձրախոսներ դնելու գծով (խրճիթ—ընթերցարաններ, կուլտուրական շինարարության տներ, ճաշարաններ, կուլտուրական թեյարաններ և այլն), կազմակերպելով միաժամանակ ռադիո—հեռախոսներ գյուղացիների տներում.

2. Գյուղի ռադիոֆիկացիայի և գյուղական բընակչությանը ռադիո—պիտույքներով սպասարկելու խնդիրը պարտավորեցնում է սպառողական կոոպերացիային լրջությամբ վերաբերվելու այդ աշխատանքի հետ: Պլանային ռադիոֆիկացիան պիտի կատարել առաջին հերթին գյուղի սոցիալիստական սեկտորում և յերկրորդ հերթին՝ հասարակական վայրերում—խրճիթ—ընթերցարաններում, կուլտուրական շինարարության տներում և այլն:

3. Պլանային ռադիոֆիկացիայի ծավալուն աշխատանքը պահանջում է հատուկ ուշադրություն դարձնել այդ աշխատանքների ֆինանսավորման խնդիրների



շուրջը: Անհրաժեշտ է լայնորեն ծավալել բնակչության միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու աշխատանքները, վորպեսզի ապահովվի գյուղի ռադիոֆիկացիայի աշխատանքների հաջողությունը:

4. Ռադիոյի շուրջը մասսայական աշխատանքներ կատարելու ձևեր պիտի հանդիսանան.— ա) ռադիոունկնդրության (լսելու) կազմակերպում, վորի համար նախորոք պիտի հայտարարել ռադիո—հաղորդումների ծրագիրը: բ) Կազմակերպել զրույց լսված ռադիո հաղորդումների շուրջը: գ) Քաղվածքներ անել կարդացված ռադիո թերթերից, ամսագրերից ու գրքերից: դ) Հավաքել դիտողություններ ու նյութեր տեղական թերթերի միջոցով— ռադիոյով հաղորդելու համար: ե) Մոբիլիզացիայի յենթարկել հասարակայնության ուշադրությունը ռադիո—աշխատանքների շուրջը:

5. Հասարակայնությունը ռադիոաշխատանքների շուրջը զարգացնելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել Ռ. Բ. Ը.—Ռադիո Բարեկամների ընկերության բջիջներ, վորոնց աշխատանքների մեջ են մտնելու,—ա) օգնել ռադիոկազմակերպություններին ռադիո—հաղորդումներ կազմակերպելիս, բ) ընտրել ակտիվիստներ, ռադիոխմբակներ կազմակերպելու համար, գ) ուսումնասիրել ռադիո—տեխնիկան, դ) ռադիոլսողներից ռադիոհաղորդումների շուրջը գնահատականներ հավաքելը և այլն:

## Շրջանային կուլտ-գրախանութներ

1. Գյուղին գրքեր, պարբերական թերթեր, ուսումնական պիտույքներ, գրասենեկային ու գրենական պիտույքներ, ինչպես նաև կուլտուրական ապրանքներ հասցնելու համար՝ շրջանային սպառողական

ընկերությունների կից կազմակերպվում են շրջանային կուլտ-գրախանութներ:

2. Գրատարածման ու կուլտուրական ապրանքների առեվտրի բոլոր գործառնական ու կազմակերպչական աշխատանքները, նույնպես և շրջկենտրոնից ներքեվ գտնվող կուլտ-խանութների ու գրատարածման կետերի աշխատանքների ղեկավարումը կատարվում ե շրջանային սպառողական ընկերության վարչության և շրջկուլտ-գրախանութի վարիչի միջոցով:

3. Խորհրդային տնտեսությունների, փորձակայանների և մեքենա-տրակտորային կայանների սպասարկման համար շրջկուլտ-գրախանութում կազմակերպվելու յեն գրքի և կուլտ-ապրանքների տեսակների հատուկ ֆոնդեր:

4. Շրջկուլտ-գրախանութների ապրանքների նըմուշների մեջ պիտի մտնեն,—ա) գրքեր, բ) պարբերական հրատարակություններ (լրագրեր, ամսագրեր և այլն), գ) գրենական ու գրասենեկային պիտույքներ, դ) յերաժշտական գործիքներ, ֆոտո, ռադիո, սպորտառարկաներ, խաղալիքներ, «Մոր և մանկան» համար անհրաժեշտ առարկաների տեսակները, ուսումնագիտական պիտույքներ և այլն:

5. Շրջկուլտ-գրախանութների վողջ պլանային սպասարկումը կատարվելու յե տրանզիտով, իսկ յենթատեսակավորումը (подсортировка) պիտի կատարվի տեղական հրատարակչական պահեստների կողմից:

6. Շրջանային կուլտ-գրախանութները հանդիսանալով գործառնական պլանային հարաբերություններում պահեստային և կազմակերպչական աշխատանքների ֆունկցիաներ ունեցող միավորներ, պիտի հան-



դիսանան շրջանային սպառողական ընկերության անդամներից մեկի յենթականները:

| Վերամշակման ծրագիր | Աշխատանքի նյութ |
|---|---|
| 1. Սպառողական կոոպերացիայի խնդիրները կինո աշխատանքներում: | 1. Կարինցև—Կոնկո— «Սպառողական կոոպերացիայի կինո աշխատանքը գյուղում», Հրատ. 1930 թ.: |
| 2. Մասսայական քաղ-լուսաշխատանքը կինոյի շուրջը: | 2. Ամսագրեր՝ ա) Ռադիո-Ֆրոնտ բ) Ռադիո-լյուբիտել գ) Ռադիո-դերեվնե: |
| 3. Հասարակական մոբիլիզացիան կինո աշխատանքների շուրջը: | 3. Եժանագին գրադարան «Ռադիո-վսեմ»: |
| 4. Սպառողական կոոպերացիայի ֆոտո-աշխատանքները: | 4. Կոպեկանոց ռադիո գրադարան: |
| 5. Սպառողական կոոպերացիայի խնդիրները գյուղը ռադիոֆիկացիայի յենթարկելու գործում: | 5. Դ. Բունեյովիչ —«Ինքնագործունյա ֆոտո ապարատներ ու պարագաներ» հրատ. «Ազգանյուկ»: |
| 6. Աշխատանքը կուլտուրական ապրանքների հետ: | 6. Դավիդ. «Լուսանկարչության գործնական ձեռնարկ սկըսնակների համար», մասն I և II: |
| 7. Շրջանային կուլտ-գրախանութների նպատակներն ու խընդիրները: | |

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպիսի խնդիրներ ե հետապնդելու սպառողական կոոպերացիան կինո-աշխատանքներով:

2. Ինչո՞ւ համար ե պետք կինո-ցուցադրումների ժամանակ ներածական խոսք ասել նկարի բովանդակության մասին (ի՞նչ բովանդակությամբ), բարձրաձայն կարդալ մակագրությունները և կարևոր տեղերում ռեպլիկաներ բաց թողնել:

3. Ի՞նչպես պետք կազմակերպել զրույցներ կինոնկարների շուրջը:

4. Ի՞նչպես պետք կառուցել աշխատանքը գիտական կինո-նկարներ ցուցադրելիս:

5. Ի՞նչպիսի մասսայական գեղարվեստական երեկոներ պետք կազմակերպել կինոյի մասնակցությամբ:

6. Ի՞նչ բան է Խ.Կ.Բ.Ը. և ի՞նչպես պետք կազմակերպել այն:

7. Ի՞նչպես պետք կատարվի ֆոտո-աշխատանքը սպառողական կոոպերացիայի կողմից:

8. Ի՞նչպես է սպառողական կոոպերացիան կատարելու գյուղի ռադիոֆիկացիան:

9. Ի՞նչպիսի մասսայական աշխատանք պետք կատարել կինոյի շուրջը:

10. Ի՞նչպես կազմակերպել Ռ.Բ.Ը. բջիջ:

11. Ի՞նչպիսի դեր և նշանակություն ունեն շրջանային կուլտ-գրախանութները:

Գործնական առաջադրություններ են հանդիսանալու դպրոցում սովորողների ուժերով կազմակերպել կինոյի և ռադիոյի ցուցադրական երեկո:

Ուսանողներից կազմված բրիգադայի միջոցով պարզել շրջկուլտ-գրախանութի աշխատանքները և մասնացույց անել աշխատանքի դրվածքին վերաբերող միջոցներ:

## Թ ե մ ա VIII

*Սպառողական կոոպերացիայի կուլտուր-կենցաղային աշխատանքները (2 ժամ):*

Պարապմունքների խնդիրն է հանդիսանալու պարզել, որ

1. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը և կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների շինարարության աճումը սուր կերպով առաջադրում են կենցաղի սոցիալիստական վերակառուցման տեմպերի արագացման խնդիրը: Սպառողական կոոպերացիան, որպես հասարակական-մասսայական և բնակչության սպառողական պահանջներին սպասարկող կազմակերպություն, պետք գրավի անհատական կենցաղային ձևերը կոլեկտիվ հիմունքներով վերակառուցելու առաջնագույն տեղերից մեկը:

2. Աշխատավորության կուլտուր-քաղաքական պահանջները բացարձակորեն աճել են հին անհատական կենցաղի շրջանակներից: Առանձին ուժով է աճում սոցիալիստական հիմունքներով կուլտուր-լուսավորության և կենցաղային հիմնարկների կազմակերպման անհրաժեշտությունը, նպատակ ունենալով նոր սոցիալիստական ձևի կենցաղի զարգացնելն ու ամրացնելը, ինչպես նաև հին կենցաղային վերապրումների—տնային ոջախների, ադաթների, անկուլտուրականության և այլ այս կարգի այլանդակությունների դեմ պայքարելը:

3. Հասարակական, կուլտուրական հիմնարկների շինարարության ծավալումը—կուլտուրական շինարարության տներ, գրադարաններ, ընթերցարաններ, թատրոններ և այլն, հսկայական նշանակություն ունեն հին կենցաղի վերակառուցման և աշխատավորության մտածված հանգիստը կազմակերպելու գործում: Սպառողական կոոպերացիան ակտիվ մասնակցություն է ցուցահանում այդ կուլտ-հիմնարկների շինարարությանը, ծավալելով նրանց շուրջ մասսայական քաղլուս-աշխատանքները,—կինո, ռադիո, գեղարվեստական ցուցադրումներ և այլն:

4. Ֆիզկուլտուրան, որպես աշխատավորության կուլտուրական հանգստի ձևերից մեկը, պետք է խոշոր տեղ գրավի գյուղի կուլտուրական աշխատանքներում: Սպառողական կոոպերացիայի խնդիրն է հանդիսանալու այդ աշխատանքները զարգացնելը, կազմակերպելով,—1) սպորտ-հրապարակներ, ջրային ու լեռնային կայաններ և սահարաններ, 2) ֆիզկուլտուրայի խմբակներ, 3) սպորտ ապրանքների հասցնելը գյուղին: Ֆիզկուլտուրայի շուրջը մասսայական աշխատանքներ կատարելը պետք է արտահայտվի՝ մասսաներին ֆիզկուլտուրայի մասին համապատասխան գրականություն հասցնելով, ֆիզկուլտմրցումներ կազմակերպելով, բնակչությանը ֆիզկուլտուրայում և նրա աշխատանքներում գրավելով, ֆիզկուլտուրայի նշանակության և նրա մարդկային կյանքի վրա ունեցած ազդեցության մասին զեկուցումներ կազմակերպելով և այլն:

5. Էքսկուրսիոն աշխատանքը կատարվում է գլխավոր նպատակ ունենալով էքսկուրսանտներին ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի հետ ծանոթացնելը, արտադրական հարցերի մասին այս կամ այն ցուցմունքն ստանալը, յերկրաբանության ուսումնասիրությունը, կուլտուրական հանգիստ կազմակերպելը և այլն: Կոլեկտիվ ու խորհրդային տնտեսություններում, մեքենատրակտորային կայաններում և այլն կազմակերպված էքսկուրսիաները հնարավորություն են տալիս էքսկուրսանտներին ծանոթանալու ընթացիկ սոցիալիստական շինարարության հետ, նույնպես և կոլտնտեսականների և խորհտնտեսության ու մեքենատրակտորային կայանների բանվորների հետ կուլտուրական շաղկապ ստեղծելուն: Գիտական նպատակով կատարվող էքսկուրսիաները—էքսկուրսիաներ



պատմական թանգարաններում, կուլտուրական շինարարության ցուցադրական փորձակայաններում, նույնպես և յերկրաբանական էքսկուրսիաները պետք է ունենան իրենց յուրահատուկ տեղը էքսկուրսիոն ծրագրերում:

6. Կենցաղի կոլեկտիվացման հիմունքներով ու գեղջկուհուն տնային աշխատանքների ծանր լծից ազատագրելու նպատակով կատարվող տնային տնտեսությունների վերակառուցումը սպառողական կոոպերացիայի կողմից պետք է կատարվի— 1) հացի պատրաստման և ժողովրդական սննդի կազմակերպման, 2) մանկական հիմնարկների կազմակերպման, 3) կոոպերատիվ կարի ու կարկատանի արհեստանոցների (հագուստեղենի ու կոշիկի) կազմակերպման, 4) լվացքատների, 5) բաղնիքների գծով և այլն:

7. Ժողովրդական սնունդը գյուղում, որպես կենցաղի վերակառուցման կարեվորագույն ձևերից մեկը՝ զարգացնելու համար, անհրաժեշտ է ներգրավել ոչ միայն սպառողական կոոպերացիայի, այլև բոլոր հասարակական կազմակերպությունների, նույնպես և աշխատավորական մասսաների ուշադրությունը:

8. Գյուղատնտեսությունը կոլեկտիվացման յենթարկելու գործում վերցրած հարվածային տեմպերը պահանջում են սպառողական կոոպերացիայից համապատասխան տեմպեր վերցնել նաև ժողովրդական սննդի գործը զարգացնելու ուղղությամբ: Ժողովրդական սննդի կողմից դեռևս թույլ կերպով գյուղի սոցիալիստական սեկտորի ընդգրկումը՝ պետք է վերացվի: Հաշվի առնելով կոլեկտիվ տնտեսությունների արտադրական կյանքում վորոշ քանակությամբ կանայք ներգրավելու հնարավորությունը՝ սպառողական կոոպե-

րացիան պիտի խոշոր թվով կանայք ներգրավի ժողովրդական տնտեսի գործում, դրանով իսկ նպատակելով կնոջ խոհանոցի կյանքից ազատելուն:

9. Սպառողական կոոպերացիան գյուղում ժողովրդական տնտեսի գործը կազմակերպելիս, պիտի հաշվի առնի սպասարկվող խմբակների պահանջներն ու նրանց բյուջետային հնարավորությունները—հատկապես բատրակ-չքավորական շերտերի, ջանալով միաժամանակ բարձրացնելու կերակուրների որակն ու սննդավետությունը:

10. Կուլտուրական թեյարանների կազմակերպումը պիտի կատարվի հին «չայխանաների» իսպառ վերացման նպատակով, կազմակերպելով իսկական կուլտուրական հիմնարկություններ, որտեղ հաճախորդները հնարավորություն ունենան որակյալ սնունդ ստանալու հետ միասին՝ ստանալ նաև կուլտուրական հանգիստ: Կուլտուրական թեյարաններում կուլտուրական աշխատանքներ ծավալելու գործում (թերթերից ու ամսագրերից քաղվածքներ անելը, զանազան խնդիրների շուրջ զրույցներ կազմակերպելը, դեկուցումներ կազմակերպելը, սպառողական կոոպերացիայի աշխատանքների մասին ինֆորմացիա տալը, խորհրդային տնտեսական շինարարության հարցերի շուրջը տեղեկություններ տալը և այլն) ունեն հսկայական հասարակական նշանակություն և հանդիսանում են գյուղում կուլակային տարրերի կողմից մղվող ագիտացիայի դեմ պայքարելու ուժեղագույն զենքերից մեկը:

11. Նկատի ունենալով հացի հասարակական պատրաստման շուրջը կատարված դեռևս թույլ աշխատանքը գյուղում՝ անհրաժեշտ է լայն բացատրական աշխատանք կատարել գյուղում հասարակական ընդհանուր



հացագործարան կազմակերպելու խնդրի շուրջը: Հացի պատրաստման հասարակական կազմակերպման խնդրի շուրջը մղելիք պրոպագանդան պետք է սերտորեն կապել մոտակա հացագործարանում կամ փռում էքսկուրսիա կազմակերպելու հետ, կատարելով այդպիսին գյուղացիների մասնակցությամբ:

12. Հետապնդելով գեղջկուհուն տնային ծանր աշխատանքներից ազատելու նպատակը, գյուղերում պիտի կազմակերպել ինչպես հասարակ-էլեմենտար սարքավորում պահանջող, նույնպես և քաղաքային տիպի՝ խոշոր և լավ սարքավորված լվացքատներ: Անհրաժեշտ է կազմակերպել նաև գինվորական տիպի— շարժական փոխադրական լվացքատներ, որոնցով հնարավոր է սպասարկել սեզոնային շինարարական բանվորներին, որոնք ժամանակով դաշտի հետ կապված գյուղատնտեսական բանվորներին, տրակտորային բրիգադների բանվորներին և այլն:

13. Սպառողական կոոպերացիայի կենցաղային աշխատանքների մեջ են մտնում նաև պրիմիտիվ ու կանոնավոր բաղնիքների կազմակերպման աշխատանքները, հատկապես ազգային փոքրամասնության ու կուլտուրապես հետամնաց շրջաններում:

14. Կարի ու կարկատանի արհեստանոցներ կազմակերպելիս՝ առաջին հերթին պետք է կազմակերպել՝ կոշիկների, հագուստեղենի, սպիտակեղենի և տրիկոտաժ իրերի արհեստանոցներ: Կոլեկտիվ ու խորհրդային տնտեսություններում կարի ու կարկատանի արհեստանոցներ կազմակերպելիս պետք է հետապնդել գեղջկուհուն այդ աշխատանքներից ազատելն ու գյուղի տնտեսական շինարարության խնդիրներին մասնակից դարձնելու նպատակը:

15․ Սպառողական կոոպերացիան սոցիալիստական նոր կենցաղ կազմակերպելու իր աշխատանքներում հատուկ ուշադրություն պիտի դարձնի երեխաների սպասարկման վրա, այնքան, որքան սոցիալիստական կենցաղի կազմակերպման ծավալուն աշխատանքների պահանջները պարտավորեցնում են սպառողական կոոպերացիային ուժեղացնելու մանկական հիմնարկությունների կազմակերպման աշխատանքները (մինչ 3 տարեկան հասակ ունեցող երեխաների մսուրներ, 3–8 տարեկան հասակ ունեցող երեխաների համար մանկապարտեզներ ու մանկական հրապարակներ և այլն)։ Մանկական հիմնարկությունների կազմակերպման աշխատանքները պիտի կատարվեն գլխավորապես հենց իր՝ հասարակության միջոցները մոբիլիզացիայի ենթարկելու միջոցով, ավելացնելով դրան՝ կոոպերացիայի և պետության կողմից բաց թողնված միջոցները։

16․ Նոր կենցաղի պրոպագանդայի գործում խոշոր նշանակություն ունեն մնայուն և պարբերական կոնսուլտացիաների կազմակերպման աշխատանքները։ Հաշվի առնելով գեղջկուհիների հաճախակի առարկությունները ու ընդդիմադրությունները մանկական հիմնարկների կազմակերպման գործին՝ կոնսուլտացիաները խոշոր դեր ունեն կատարելու մանկական հրապարակների կազմակերպման համար նպաստավոր տրամադրություն ստեղծելու խնդրում, կատարելով դաստիարակչական աշխատանք գեղջկուհիների շրջանում։

17․ Սպառողական կոոպերացիան պիտի իր աշխատանքների ծրագրում մտցնի կուլտուրայի տներում, ակումբներում, հանրակացարաններում, ամառային ու ձմեռային մանկական հրապարակներում, մանկապար-



տեզներում և այլն երեխաների անկյուններ կազմակերպելու աշխատանքները, որպեսզի հնարավորություն ստեղծվի գեղջկուհի-մոր համար ուսմամբ զբաղվելու և ժողովներ հաճախելու։

18․ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ազգային հանրապետություններում ու շրջաններում մանկական հիմնարկություններ կազմակերպելու գործի վրա, հաշվի առնելով այդ վայրերի բնակչության կուլտուրական հետամնացության պայմանները։

19․ Ազգային շրջաններում կատարելիք կենցաղային աշխատանքների ձևերն են հանդիսանալու,— մանկական հրապարակների, մանկապարտեզների, մնայուն ու պարբերական կոնսուլտացիաների կազմակերպումից բացի՝ կազմակերպել նաև ինտերնատներ— չքավորների երեխաների համար և հատկապես աղջիկների համար, նպատակ ունենալով նրանց վաճառքի, կալիմի և այլ նման կենցաղային այլանդակ երևույթների դեմ պայքարելը, որպիսին դեռ մինչ այժմ գոյություն ունի մի շարք ազգային հանրապետություններում, Սիբիրում, տունդրաներում, տափաստաններում, քոչվորների շրջանում և այլն, որոնք հանդիսանում են կուլտուրայի ու գիգիենայի դերեզմանները։

20․ Սպառողական կոոպերացիան պիտի լուրջ կերպով հոգա մանուկների սնունդի կազմակերպման մասին, հատկապես գյուղի սոցիալիստական սեկտորում՝ մանկական ճաշարանների և դպրոցներում տաք նախաճաշ մատակարարող ցանցի ծավալման միջոցով։ Մանկական սնունդի գործը պիտի կազմակերպվի ծնողների դրամական միջոցներով․ սպառողական կոոպերացիան օգնում է նրանց կազմակերպված սննդամատակարարման ձեռնարկություններ տրամադրելու միջոցով, իր վրա

վերցնելով միաժամանակ նյութապես անկայուն ծնողների յերեխաներին տաք նախաճաշ մատակարարելու գործը։ Սպառողական կոոպերացիայի վրա յե ընկնում յերեխաների սննդի գործի կազմակերպման թերությունների պատասխանատվությունը, դրա մեջ ներգրավելով նաև վորպես այդ գործին օժանդակող կազմակերպություններ՝ «յերեխաների բարեկամներ»-ի բջիջն ու դպրոցական խորհուրդները։

21. Սպառողական կոոպերացիայի կողմից դպրոցներում կատարվող աշխատանքները պիտի սերտորեն կապված լինեն աշակերտական կոոպերացիայի աշխատանքների հետ, վերցնելով վերջինիս իր անմիջական ղեկավարության տակ, կատարելով նրանց նկատմամբ հրահանգչական աշխատանքներ, սպասարկելով նրանց ապրանքներով, ոգնելով նյութական միջոցներով և այլն։ Աշակերտական կոոպերացիայի ֆինանսական միջոցներն են հանդիսանալու իրենց սեփական միջոցները (մուտքի վճարներն ու փայավճարները)։

22. Աշակերտության ու պիոներների կուլտուր-կենցաղային սպասարկումը կայանում է դպրոցների տնտեսական սպասարկման (տաք նախաճաշեր, դպրոցական պիտույքներով սպասարկելը և այլն) և դպրոցներում կոոպերատիվ լուսավորության ու կոոպերատիվ հասարակայնության կազմակերպման (կոոպ խմբակներ, աշակերտության մասսայական աշխատանքների մեջ ներգրավել և այլն) մեջ։

Սպառողական կոոպերացիան մասնակցություն է ունենում պիոներական շարժմանը նյութական ոգնություն ցույց տալու գործում,— հրապարակների, լրագրերի, զանազան տեսակի արհեստանոցների կազմակերպում և այլն։ Պիոներների շրջանում աշխատանքները լավացնելու նպատակով, անհրաժեշտ է վերցնել պիոներ ջոկատների շեֆությունը և պիոներներին ներգրավել կոոպերատիվ կամպանիաներում և սիստեմատիկ աշխատանքներում, ապահովելով նրանց ակտիվ մասնակցությունը դրանցում։



23. Մայրության ու մանկության հարցերի շուրջը պրոպագանդան ուժեղացնելու նպատակով սպառողական կոոպերացիան կազմակերպում է «Մոր և մանկան» անկյուններ։ Այդ անկյուններում կազմակերպվում է կոնսուլտացիա մանուկների դաստիարակման ու առողջապահության հարցերի շուրջը։ Կոնսուլտացիաները կազմակերպվում են բժիշկների ու մանկավարժների մասնակցությամբ։ Յեթե կոնսուլտացիաների կազմակերպումը մոր և մանկան խանութներում հնարավոր չէ, այդպիսին պետք է կազմակերպել մոտակա նախադպրոցական հիմնարկում— կոլեկտիվների հետ միասին— նախապես պայմանավորվելով նրանց հետ։

24. Բացի սովորական կոնսուլտացիաներից՝ նախադպրոցական մանկավարժը պիտի գործոն մասնակցություն ունենա «Մոր և մանկան խանութի և անկյունի» ծրագրային աշխատանքներում։ Այդ անկյունները պիտի սպասարկեն մանուկներին սննդամթերքներով, հագուստներով, խաղալիքներով և այլն և նպաստելու յեն ծնողների կուլտուրական մակարդակի բարձրացմանը։

25. «Մոր և մանկան» խանութի աշխատակիցները պիտի մասսայական աշխատանք կատարեն ծնողների շրջանում, նրանց այցելումների ժամանակ։ Աշխատակիցները պիտի հասկացնեն ծնողներին, թե վորպիսի մթերքներն են ոգտակար կամ վնասակար մանուկների համար, ինչպես և յերբ կերակրել նրանց։ Խանութի

աշխատակիցները պիտի գիտնան ընտրել ապրանքների համապատասխան տեսակներ յերեխաների համար և տան համապատասխան ցուցմունքներ՝ առաջարկված իրերը ճշտությամբ օգտագործելու յերեխաների համար։ Վորպեսզի հնարավոր լինի վորոշել, թե վո՞ր տեսակի յերեխայի համար ինչպիսի խաղալիք է պետք, խանութի աշխատակիցը պիտի գիտենա համապատասխան տարիքի յերեխաների խաղերի բնույթն ու առանձնահատկությունները և ապա ըստ այն առաջարկի այդպիսիք։

26. Սպառողական կոոպերացիան իր բոլոր կուլտուր-մասսայական աշխատանքները պետք է կատարի աշխատավոր մասսաների ինքնագործունեության հիման վրա— հատկապես կին ակտիվի և պիտի հանդիսանա աշխատավոր բնակչության կոոպերացման կարևորագույն ազդակներից մեկը։

| Վերամշակման ծրագիր | Աշխատանքի նյութ |
| --- | --- |
| 1. Կուլտուր լուսավորության ու կենցաղային հիմնարկների կազմակերպումը, վորպես կենցաղի սոցիալիստական ձև։ | 1. Սպառողական կոոպերացիայի խնդիրները՝ աշխատավորության կենցաղային սպասարկման բնագավառում — Ցենտրոսոյուզի վարչության 1930 թվի փետրվարի 23-ի № 314 վորոշումը։ |
| 2. Ֆիզկուլտուրան սպառողական կոոպերացիայի աշխատանքներում։ | 2. Բուտուզովա — Կնոջ կոոպերացումը։ |
| 3. Եքսկուրսիային աշխատանքները։ | 3. Ա. Կուխրա. — Սպառողական կոոպերացիայի կենցաղային աշխատանքները ազգային շրջաններում։ |
| 4. Տնային տնտեսության վերակազմությունը, կենցաղը կոլեկտիվացման յենթարկելու հիման վրա։ | 4. Ի. Դանովսկայա. — «Մոր և մանկան» անկյունները. Հրատ. Ցենտրոսոյուզի, 1930 թ.։ |
| 5. Կուլտ-կենցաղային աշխատանքը յերեխաների մեջ։ | 5. Ա. Ի. Սենյուշկինա, — Կազմակերպեցեք մանկական հիմնարկություններ։ |
| 6. «Մոր և մանկան» անկյուններ։ | 6. Սպառողական կոոպերացիայի 11 համագումարի բանաձևերը՝ կուլտուր-կենցաղային աշխատանքների մասին։ |
| 7. Մասսաների և ակտիվի ուշադրության մոբիլիզացիան՝ կուլտուր կենցաղային աշխատանքների շուրջը։ | 7. Գալյանսկի. — Կուլտուր կենցաղային աշխատանքները կոլեկտիվ տնտեսություններում։ Գետհրատ. 1930 թ.։ |
| | 8. Ամսագիր — «Կուլտակտիվ» № 12. Հրատարակություն ֆիզկուլտուրա և սպորտ-ի 1930 թ. |



## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպիսի խնդիրներ են հետապնդվում կուլտուր-կենցաղային աշխատանքներով։

2. Ի՞նչպիսի դեր են խաղում կուլտուրական լուսավորության և կենցաղային հիմնարկությունները։

3. Ի՞նչպես պիտի կատարել ֆիզկուլտուրային աշխատանքները սպառողական կոոպերացիայում։

4. Ի՞նչպես պիտի անցկացնել եքսկուրսային աշխատանքները։

5. Ինչո՞ւ համար է կարևոր ծավալել ժողովրդական սնունդը և ի՞նչպես է այդ կատարվում սպառողական կոոպերացիայի կողմից։

6. Ի՞նչ դեր ունի կուլտուրական թեյարանը գյուղում։

7. Ինչո՞ւ համար է կարևոր հացի հասարակական պատրաստման ծավալումը և ի՞նչպես է այդ կատարվում սպառողական կոոպերացիայի կողմից։

8. Ի՞նչպես պիտի կառուցել լվացքատները գյուղում։

9. Ի՞նչպես են կազմակերպվում կարի ու կարկատանի արհեստանոցները սպառողական կոոպերացիայի կողմից:

10. Որո՞նք են յերեխաների մեջ կատարելիք աշխատանքների ձևերն ու մեթոդները:

11. Ի՞նչպես և ի՞նչ մանկական հիմնարկություններ պետք է կազմակերպել:

12. Ի՞նչպես կիրառել մանուկների անունը՝ սպառողական կոոպերացիայի կողմից:

13. Ինչի՞ համար և ի՞նչպես կազմակերպել մանկական սենյակները:

14. Ինչո՞ւ համար հատուկ ուշադրություն պետք դարձնել ազգային շրջաններում կատարելիք կուլտուրական աշխատանքների վրա:

15. Ի՞նչպիսի աշխատանքներ պետք կատարել «Մոր և մանկան» անկյունների ու խանութների միջոցով:

16. Ինչո՞ւ համար է կարևոր՝ կուլտուր-կենցաղային աշխատանքները կատարել աշխատավոր մասսայի և հատկապես կանանց ինքնագործունեության հիման վրա:

Գործնական պարապմունքներ են հանդիսանալու՝ դպրոցում սովորողներից կազմված բրիգադայի միջոցով հայտնաբերել, թե ինչպիսի կուլտուր-կենցաղային աշխատանքներ են կատարվում սպառողական կոոպերացիայի կողմից տվյալ վայրում և նկատված թերությունների հիման վրա մատնանշել միջոցներ՝ աշխատանքների լավացման համար:

Դպրոցում սովորողների նախաձեռնությամբ կազմակերպել կուլտուր-լուսավորական կամ մի փոքր մանկական հիմնարկ:

ՀՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. библиотека
ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.



ՀՀ Ազգային գրադարան
NL0203201

ԳԻՆԸ 15 ԿՈՊ. (2 մ.)

~~260~~

# ПРОГРАММА ДЛЯ СЕЛЬСКИХ ШКОЛ КООПГРАМОТЫ

Госиздат ССР Армении
Эривань 1931